

ԼԳԵՕՔ և քրիստոնեություն



Սկզբում...

Ի բնե մենք անգրագետ ենք, այդպիսին էին Ադամն ու Եվան՝ մինչև Պտուղը համտեսելը՝ Գիտելիքը ստանալը: Անգրագիտությունը թեև բնական է, սակայն մենք գնացինք դեպի Գիտելիք՝ դրանով ավելի մոտենալով Աստծո Էությանն ու Կերպարին: Տգիտությունն է, որ անբնական է ու հակագիտական:

Երբ ինչ-որ մեկը գիտելիքի պակասի պատճառով անգրագետ է ինչ-որ մի հարցում, դա բնական է, բոլորս ենք այդպիսին սկզբում: Սակայն, երբ ինչ-որ մեկն այդ գիտելիքի պակասի դեպքում քննադատում է այն, ինչ չգիտի՝ ուսանելու և ուսումնասիրելու փոխարեն, դա տգիտություն է:

Երբ հասարակությունը լի է անգրագետներով, դա սկզբնական և բնական վիճակն է, որի հետ Մարդը չհամակերպվեց և գնաց դեպի Գիտելիքը:

Երբ հասարակությունը լի է տգետներով, որոնք քննադատում են այն, ինչի հետ չեն առնչվել ու չեն ուսումնասիրել հիմնովին, դա անբնական է, դա հանգեցնում է կարծրատիպայնության, կարծրադրույթայնության, խարանի ու խտրականության, նախապաշարմունքների, այլատաժության ու դոգմաների արարման ու պահպանման, դա ավերիչ է ու խավարածին:

...եվ Արարիչն ասաց «լինի լույս», ու եղավ լույս:

Մենք ձգտում ենք դեպի Լույս... մենք ձգտում ենք դեպի Կատարելություն... գնում եմ դեպի Լույս, իսկ սխալներն ու թերությունները բնական են և բոլորին են տրված, դրանց վրա ենք սովորում՝ դրանք կրճատելով ու նվազեցնելով: Ուստի, այս ճանապարհորդության մեջ եթե նկատեք սխալներ ու թերացումներ կամ վրիպումներ, կարող եք դրանց մասին հայտնել. ouranos@innocent.com

Դու թաղված ես մեղքի մեջ: Դու անմաքուր ես: Ասում են՝ մենք ատում ենք մեղքը, սակայն սիրում ենք մեղսագործին: Ինչպե՞ս ես սիրում մեղսագործին, եթե ասում ես՝ նա սպառնալիք է մարդկության համար:² Եվ այնուամենայնիվ, մեղսագործը, որ մեղքի մեջ է, չի կարող... սա ասում է սարկավագ Սուրեն Ներսիսյանը. «Եկեղեցին նույնասեռականներին վերաբերվում է որպես հիվանդություն ունեցող մարդկանց և նրանց թույլ չի տալիս Հաղորդակցություն ստանալ պատարագի ժամանակ, որովհետև համարվում է, որ նրանք մեղքի մեջ են: Նույնիսկ, եթե նրանք խոստովանում են, նրանք գտնվում են դարձի ժամանակահատվածում և այդ ժամանակ էլ զրկված են լինում Հաղորդակցությունից: Այս մարդիկ անմաքուր չեն, նրանց մեջ կա աղտ, գուցե նույնիսկ այդպես են ծնվել³: Մենք վերջերս մի էլեկտրոնային նամակ գրեցինք մի նույնասեռականի և նրան խնդրեցինք ավելի մոտենալ Աստծոն և ապաշխարել»:⁴ Եվ հիշեցնում է՝ Աստված պատժեց Հռոմեացիներին: Նա նրանց դատապարտեց նվաստ կրքերի, այդ նվաստ կրքերը իրենց անբնական սեռական կարիքներն էին ... զարմանալի է ... ուրեմն, Աստված (քրիստոնեական Աստված) պատժում է մարդկանց՝ նրանց վրա ուղարկելով սեռական «անբնական» ցանկություններ: Առնվազն Հռոմեացիներին այդպե՞ս էր պատժել: Առնվազն հայ քրիստոնյա հոգևորականն այդպես է՝ մեկնաբանում դա՝ հետևելով Պողոս Առաքյալին: Քրիստոնեական այս Աստծո կերպարն ինձ հիշեցնում է Հռոմեական Վեներային, ով որպես պատիժ կանանց վրա էր ուղարկում ցավաշատ և տգեղ, եթե կարելի է այդպես ասել, հիվանդություններ, և հենց դրա համար էլ այդ հիվանդությունները կոչվեցին վեներական (Վեներայից եկող կամ ուղարկված): Սեռական կրքով պատժող Աստված: Մա կոչվում է քրիստոնեություն: Լավ, իսկ մինչև Պողոսի Հռոմ գնա՞լը: Այդքան դարեր մարդիկ պատժված են եղել: Ընդ որում, այդ պատիժն «ուղարկվել է» ոչ միայն Հռոմեացիներին, այլև շատ այլ ազգերի: Ցայսօր էլ Աստված պատժում է մարդկանց և կենդանիներին «անբնական» սեռական պահանջներով: Ա՛յ թե Աստված: Եվ անբնական... եթե դա կա բնության մեջ, էլ ի՞նչ անբնականության մասին է

¹ Հոմոֆոբ վերաբերմունքի պատճառով երբեմն նույնասեռականներին թվում է՝ իրենք լքված են, ոչ միայն եկեղեցու, այլև՝ Աստծո կողմից, ինչն էլ հանգեցնում է խնդիրների հոգևոր և հոգեբանական բնագավառներում:

² Այդ նախադասությունը մեջբերել եմ հետևյալ բլոգից. <http://penthesilee.wordpress.com/2010/07/13/ma-petite-visite-de-la-blogosphere-catholique-traditionaliste/>, որի հեղինակը մանրամասն «զննել», ուսումնասիրել և պատմում է ամենաձայրահեղական կաթոլիկ քրիստոնեաների մասին:

³ Ոմանք կարող են ծնվել անմաքուր ու մեղավոր, իսկ մյուսները՝ մաքուր ու անմեղ... իրենց ծնողների մեղքերի պատճառով: Մա բուդդիստական «կարմայի» գաղափարը չէ՞, որ քրիստոնեության մեջ ձևափոխության է ենթարկվել: Մա քրիստոնեություն է, Աստված իրո՞ք էրպես խստորեն կարող է «պատժել» դեռևս անմեղների՞ն: Այս երեխան պատժված է. <http://www.youtube.com/watch?v=R3pvAk7Zz5U>:

⁴ <http://blansh.wordpress.com/2008/07/21/gays/>

խոսքը:⁵ Եվ չնայած ծայրահեղական մոտեցումներին, լուծումներ գտնելը խիստ ավելի կարևոր է, քան թե քննադատելը: Քննադատելով նմանվում և հավասարվում ես իրենց, որ ընդամենը քննադատում են, բանադրում երբեմն և չեն փորձում հասկանալ, վերլուծել, վերախմաստավորել: Խոսքը նույնիսկ գրերը փոխելու մասին չէ, այլ այդ գրվածքների նկատմամբ վերաբերմունքը վերախմաստավորելու⁶ (թե ինչու է դա կարևոր, կխոսվի հետագայում): Չկա անհնարին ոչինչ: Հավատա և լեռներ կշարժես, ասվում է քրիստոնեական Գրերում: Անհնար չէ նաև լինել նույնասեռական և քրիստոնեա: Դա նույնիսկ համեմատաբար նոր չէ՝ ունենալով տասնամյակների պատմություն (եթե չհաշվենք սուրբ Սերգիոսին ու Սուրբ Բաքոսին, և այլ հանդուրժողական օրինակներ վաղ քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ, ինչպես նաև մեկ այլ գեղեցիկ օրինակ, որը կնկարագրվի հետագայում): Այսպիսով, անդրադառնանք այն հատվածներին, որոնցում խոսվում է նույնասեռականության և/կամ նույնասեռականների մասին:

Նույնասեռականության թեմային անդրադառնալիս քրիստոնեա հավատացյալները «հավատացյալները» և Հավատացյալները, և հատկապես հավԱՏՅԱՅ՝ները հաճախ են մեջբերումներ և հղումներ կատարում գրերի տվյալ փնջի վրա (այսինքն նրանք, ովքեր գիտեն սրանց մասին կամ կարդացել են այս հատվածները Բիբլիայում⁸ կամ հանդիպել մեկ այլ աղբյուրում, այլ ձևով), ինչպես օրինակ՝

⁵ http://en.org/wiki/Homosexuality_in_animals, ուր առկա է ավելի քան 85 օգտագործված աղբյուր ու հետազոտություն, ներառյալ՝ Նեյշընալ Զեոգրաֆիքի (National Geographic Society) հոդվածը. http://news.nationalgeographic.com/news/2004/07/0722_040722_gayanimal.html; հետաքրքիր է նաև նույնասեռականությունը դրսևորած կենդանիների հետևյալ ցուցակը՝ հարուստ օգտագործված գրականության ցանկով և աղբյուրներով. http://en.wikipedia.org/wiki/List_of_animals_displaying_homosexual_behavior

⁶ Ինչպես Մել Ուայթն է նշում իր արժեքավոր և խիստ արդիական աշխատության մեջ (“What the Bible says -- and doesn't say -- about homosexuality”). «Ու թե մենք հավատում ենք, որ Գրերը «անսխալ են», վտանգավոր է կարծել, որ (Գրերի) մեր ընկալումները է անսխալ»:

⁷ Մա այն կրոնական մտածողությամբ մարդիկ են, ովքեր կենտրոնանում են «չե», «ոչ», «չի կարելի», «մեղք է», «դեմ է» և նման այլ արտահայտությունների վրա, այլ ոչ թե՛ սիրո, գթության, մեծասրտության, ներողամտության վրա: Իհարկե, սրանք հավատող մարդիկ չեն, ու դժվար թե՛ սիրող, այլ՝ վախեցող, սարսափի մեջ մխրճեցված ու մյուսներին էլ դրա մեջ մխրճող խավարասերներ են, ում միակ մտավախությունը դատաստանն է, ու որոնք ապրում ու մյուսներին էլ փորձում են ապրեցնել միայն եկող «երկնային դատավարությանը»: Հետաքրքիր է, որ ինդուլգենցիաները Եվրոպայում և խաչքարերից ոմանք Հայաստանում (ու որոշ այլ բաներ) ստեղծվել են հենց այդ դատաստանի համար՝ որպես յուրօրինակ կաշառք Երկնայինի համար, այդ աստիճան են մարդիկ մխրճված խավարի մեջ, որ հավատալով այս աշխարհը կործանվելու է նորի արարման համար, հավատում են՝ իրենց նյութական կաշառքները մնալու են կործանումից էլ հետո՝ որպես վկայագրեր, որպես տոմսեր:

⁸ Իրականում ինչքանով է նպատակահարմար Գրերը կոչել Աստվածաշունչ. Դա, ըստ հուդայականության և քրիստոնեության, տրված է մեզ Աստծո կողմից, այնուամենայնիվ... տասներկու աշակերտներից միայն չորսի Ավետարաններն են, որ ընդգրկված են Գրքում, իսկ հուդայական հարուստ փիլիսոփայական և հոգևոր մշակույթից միայն Գրքերի սահմանափակ քանակ, և այլ հրաշագեղ պատառներ: Այնուամենայնիվ, Գրերը տարբեր են ու խիստ բազմազան, հատկապես, եթե իրար հետ ենք համեմատում դրանց տարբեր հրատարակչություններն ու մեկնաբանությունները՝ տարբեր եկեղեցիներում ու տարբեր կրոններում (հուդայականություն, քրիստոնեություն, մահմեդականություն), նաև՝ տարբեր լեզուներում: Ուստի Բիբլիան անվանելով Աստվածաշունչ (հեղինակը կարծում է, որ դրանով) արտահայտում ես քո ծայրահեղական մոտեցումը:

1. Ծննդոց 19:5 «Եւ Ղովտը կանչեցին ու անոր ըսին. «Ո՞ւր են այն մարդիկը, որոնք այս գիշեր քեզի եկան. զանոնք դուրս հանէ մեզի, որ գիտնանք զանոնք»:
2. Ղեւտացոց 18:22 «Եւ արուի հետ՝ կնոջ հետ պառկելու պէս մի՛ պառկիր՝ պրոծութիւն է այդ»:
3. Ղեւտացոց 20:13 «Եւ եթէ մարդ մը իր կնոջ հետ պառկելու պէս արուի հետ պառկի, երկուքն ալ պրոծութիւն ըրին. անշուշտ պետք է մեռցուին: Անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ»:

Նոր Կտակարանում Պողոս առաքյալն է մատնանշում.

- Թուղթ առ հռովմայեցիս 1:26 «...Իրենց էգերն անգամ բնական պէտքը բնութեան դէմ եղող պէտքի փոխեցին»:
- Թուղթ առ հռովմայեցիս 1:27 «Նույնպէս ալ արուները կնոջ բնական պէտքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան. արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին...»:
- Ա. թուղթ առ կորնթացիս 6:9-10 «Չէ՞ք գիտեր թէ անիրաւները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն: Մի՛ խաբուիք: Ո՛չ պոռնիկները, ո՛չ կռապաշտները, ո՛չ շնացողները: Ո՛չ իգացեալները, ո՛չ արուագէտները⁹... Աստուծոյ թագաւորութիւնը պիտի ժառանգեն»:
- Ա. թուղթ առ Տիմոթէոս 1:8-10 «Արդ գիտենք թէ օրէնքը աղէկ է, եթէ մէկը զանիկա օրինավոր կերպով գործադրելու ըլլայ: Բայց ա՛յս թող գիտնայ թէ արդարներուն համար չէ օրէնքը, հապա անօրէններուն ու անհնազանդներուն համար... Պոռնիկներուն, արուագէտներուն¹⁰... Եւ թէ ուրիշ ոեւէ բանի որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան»:

Այժմ անդրադառնանք դրանց հերթով:

Իմանուէլ¹¹...

1. Ծննդոց 19:5 «Եւ Ղովտը կանչեցին ու անոր ըսին. «Ո՞ւր են այն մարդիկը, որոնք այս գիշեր քեզի եկան. զանոնք դուրս հանէ մեզի, որ գիտնանք զանոնք»:

Այս օրինակը Սողոմոնի մասին է: Ի՞նչ է կատարվում: Ղովտին այցելում են երկու տղամարդ, որոնց նա ընդունում է և տեղ է տալիս իր տան մեջ: Արվագէտների մի ամբոյս գալիս է և պահանջում հյուրերին «գիտենալ»: Ի պատասխան Ղովտն աղերսում է քաղաքացիներին չարութիւն չանել, առաջարկում իր երկու կույս աղջիկներին հյուրերի փոխարեն՝ նշելով. (Ծննդոց 19:8) «... բայց միայն այս մարդոցը բան մը մի՛ ընէք. ***քանզի անոնք իմ յարկիս շուքին տակ մտան***»: Մենք՝ հայերս, շատ

⁹ Եվ խիստ կարևոր ու հետաքրքիր հարց է տերմինների փոփոխումը. մի տեղ՝ արվագետ, մի այլ տեղ՝ արվամո՞լ: Արևմտահայերենի և արևելահայերենի տարբերութիւնն է, թե՞ ավելի խորը հակասութիւններ...

¹⁰ Ու նորից արվագետը փոխարինվել է «արվամոլով»: <http://kendimian.com/Bible/>

¹¹ Այսօր բարեբախտաբար կան և՛ ոչ քրիստոնէական, և՛ քրիստոնէական եկեղեցիներ, որոնք կանգնած են նույնասեռականների կողքին և սրտաբացորեն ընդունում են նրանց՝ առանց որևէ նախապայմանի ու/կամ մեղադրանքի:

ենք սիրում մատնանշել մեր հյուրասեր լինելու փաստը, գիտեցողները հպարտանում են այն փաստով, որ մենք նախաքրիստոնեական ժամանակներում ունեինք Վանատուր անունով մի Աստված, որ հյուրերի հովանավոր Աստված էր: Արդյո՞ք Ղովտի դեպքն էլ հյուրասիրության մասին չէ: Նա իր հյուրերին պաշտպանելու համար նույնսիկ իր կույս աղջիկներին է դեմ տալիս անբարոյական ամբոխին. միայն թե ՀՅՈՒՐԵՐԻՆՆ, իր ՀԱՐԿԻ կամ ՏԱՆԻՔԻ ՇՈՒՔԻ ՆԵՐՔՈ ՄՏԱԾՆԵՐԻՆ չանարգեն: Այո, դա պատիժ էր (Գոմորի անբարոյական բնակիչների կործանումը): Այո, դա պատիժ էր հյուրերին անարգելու համար: Այո, դա պատիժ էր բռնաբարության փորձի համար. բնակիչները փորձեցին բռնի կերպով մտնել Ղովտի տուն և «գիտենալ» հյուրերին: Դա պատիժ էր անբարոյականության համար: Դա նաև պատիժ էր ընդդեմ քսենոֆոբիայի կամ օտարավախության, որովհետև Աստված Հրեաներին պատվիրում է Իսրայելում ապրող օտարականներին ընդունել և սիրել՝ հիշելով սեփական պանդխտության մասին (Ելից կամ Ելք 22:21). նույն տեղի 9րդ խոսքում բնակիչներն են Ղովտին սպառնում. «*Հեռո՛ւ կաց: Դու մեր երկիրը մտար իբրև պանդուխտ բնակուելու*. միթե դատաստա՞ն էլ ես ուզում տեսնել: Հիմա քեզ աւելի շատ կը չարչարենք, քան նրանց»: Արդյո՞ք դա պատիժ էր նույնասեռական վարքի և նույնասեռական սիրո համար: Ո՛չ մի բան չի ասվում դրա մասին: Չէ՞ որ նույնասեռական վարք Սողոմի բնակիչները ցուցադրել էին նաև մինչև հյուրերի ժամանելը. նրանք միմյանց վաղուց էին «գիտեցել», հավանաբար (ահա թե ինչու). այնքան շատ, որ նույնիսկ խմբերով էին վխտում և խմբով եկան Ղովտի մոտ՝ բացեիբաց: Ուստի, սա պատիժ էր պոռնկության, արվագիտության և արվամոլության համար, չարության համար, հյուրասիրության սրբազան կանոնները խախտելու համար, բայց ոչ՝ նույնասեռական վարքի և, առավել ևս, նույնասեռական սիրո համար: Այս մասին գրվել է վաղուց, արդեն մոտ չորս տասնամյակ է, ինչ շատ եկեղեցիներ ու եկեղեցականներ ընդունում են սա՝ ընդունելով, որ պետք է վերաիմաստավորել «սողոմական» բառի իմաստն ու գործածումը: Սողոմականությունը պատժելի է: Սակայն սողոմականությունն ինքն իրենով չի նշանակում նույնասեռական կողմնորոշվածություն, նույնասեռական սեր և նույնասեռական վարքագիծ: Սողոմականը հավասարազոր չէ զուտ նույնասեռականի. և՛ նույնասեռականը կարող է սողոմական լինել, և՛ տարասեռականը, և՛ երկսեռականը, ցանկացած մարդ՝ անկախ իր սեռական կողմնորոշվածությունից: Օտարավախություն, հյուրասիրության սրբազան օրենքների խախտում, արվամոլություն, սա է սողոմականությունը, բայց ոչ նույնասեռականությունը:

2. Ղեւտացոց 18:22 «Եւ արուի հետ՝ կնոջ հետ պատկելու պէս մի՛ պատկիր՝ պըղծութիւն է այդ»:

Այստեղ դատապարտվում է տղամարդու հետ կնոջ պէս պատկելու երևույթը: Կան նման տղամարդիկ, ում դուրը գալիս է պատկել տղամարդու հետ և այդ տղամարդուն պատկերացնել կին: Նման տղամարդկանց համար, եթե սեքսում «ակտիվն ես», ուրեմն գեյ կամ նույնասեռական չես, հայոց մեջ առավել ծայրահեղականներն իրենց անվանում են «q7 ք*տոդ» (ներողություն նման ժառգոնի

համար, դրանք իրենց օգտագործած տերմիններն են)¹²: Նման տղամարդիկ անկաշկանդորեն չեն վայելում սեր, ամեն ինչ տարվում է դեպի սեքս իրականում, և նույնասեռական սեր նման դեպքերում խիստ անհավանական է, որ լինի, դա գերիշխելու, «աքլորությունը» ցուցադրելու ձևերից մեկն է (հաճախ, բայց ոչ պարտադիր միշտ), կենդանական բնագոյ, որը տարածված է օրինակ՝ գաղութներում, բանտերում, բանակում: Այդ տղամարդիկ իրենց երբեք նույնասեռական չեն անվանի կամ համարի: Նման մի ծանոթ տղա ունեմ. 47 ք*նողներն իրեն համար հերոսների պես բան են: Ինքը հայիտյում է 47երին, բայց և վեհացնում է 47 ք*նողներին: Չխոսեմ նրա անունից, բայց բավականին հավանական է (նման արտահայտություններ անելուց հետո), որ ինքն էլ 47 կք*ներ, եթե ձեռքն ընկնեին: Մեկ այլ օրինակ տալիս է Մեկ Ուայթը իր գրքում առ այն, թե ինչպես մի քանի տարասեռական ուստիկան բռնաբարում են մի սևամորթ (ու տարասեռական) տղամարդու (այ սա սողմանականության լավ օրինակ է, որը դատապարտելի է անշուշտ):¹³ Իսկ պատմականորեն եղել են մշակույթներ ու ավանդույթներ, երբ տղաներին ամորձատում էին՝ տարբեր դրդապատճառներով, այդ թվում և՛ նրանց առավել կանացի դարձնելու համար (կամ թագավորների համար՝ իրենց հարեմներում, կամ էլ որպես արու մարմնավաճառ շահագործելու համար, կամ էլ այլ նպատակներով): Այսպիսով, Բիբլիայի այս հատվածը դատապարտում է նման վարքագիծը. այստեղ ասվում է կին ձևանալու մասին, այն բառացի խոսում է այն տղամարդկանց մասին, որոնք տղամարդու հետ պառկում են որպես կին. «Եւ արուի հետ՝ կնոջ հետ պառկելու պէս մի՛ պառկիր»: Սակայն այստեղ խոսք չկա արվի հետ արվի պես պառկելու մասին: Այս հատվածը կարող է մեկնաբանվել հենց այդպես՝ դատապարտելով իգացող ու իգակերպ տղամարդու (պատմականորեն այդ տղաները միշտ չէ (եթե չասենք հաճախ), որ իրենց կամքով էին ամորձատվում) և տարասեռական տղամարդու փոխհարաբերությունները. թե պառկում ես կնոջ հետ՝ նման կերպ մի՛ պառկիր տղամարդու հետ: Ավելին, այստեղ խոսքը պառկելու մասին է, իսկ պատմական քրիստոնեությունը (գուցե և՛ շատերն այսօր՝ հետևելով այդ միջնադարյան ցուցումներին) նշում էր, որ կնոջ և տղամարդու միջև ցանկացած սեռական ակտ անընդունելի էր և պիղծ, բացի՝ հեշտոցային սեքսից, ընդ որում՝ նույնիսկ տարբեր դիրքերով զբաղվել հեշտոցային սեքսով կնոջ և տղամարդու համար մեղք էր, բացի հստակորեն կանոնակարգված և միակ ընդունելի դիրքից, և սողմանականություն պատմականորեն կոչում էին նաև սեռական ակտը ոչ միայն երկու տղամարդու միջև, այլև՝ քրիստոնյայի ու ոչ քրիստոնյայի միջև, և այլ դեպքերում¹⁴: Կարելի է ենթադրել, որ Գրքի այս խոսքը դատապարտում է երկու տղամարդկանց միջև սեքսը, ընդ որում՝ նույնասեռական և ոչ նույնասեռականների միջև, ու ոչ թե՛ երկու նույնասեռականների միջև, որովհետև խոսվում է կնոջ դերը

¹² Սա բավականին հետաքրքիր երևույթ է, որ արժանի է ուշադրության ու հետազոտման. տղամարդը, որ սեռական հակումներ ունի տղամարդկանց նկատմամբ, սակայն չի կարող դա ազատորեն դրսևորել, «ներքին ցանկություններ» և «հոմոֆոբիկ շրջապատ» հակամարտության ու հակասության մեջ գտնում է նման լուծում՝ «դառնալով» (ինքն իրեն անվանելով) ԳՔ: Սա իրականում հնարավոր լուծումներից մեկն է, այնուամենայնիվ, դա անբնական լուծում է՝ թելադրված անհատի ցանկությունների և հոմոֆոբիկ հասարակության հակամարտության պատճառով:

¹³ “What the Bible says -- and doesn't say -- about homosexuality”.

¹⁴ Վանեսա Բեյրդ. «Սեռական բազմազանության արժանահավատ ուղեկից»:

նմանակելու մասին, այնուամենայնիվ, դժվար է պատկերացնել, որ այն դատապարտում է բերանային հարաբերություն և երկու տղամարդկանց միջև այլ ֆիզիկական ու սեռական այլ փորձերը, երբ ընդհանրապես չեն «պառկում», իսկ պլատոնական կապվածության ու սիրո մասին այստեղ խոսք չկա ընդհանրապես (Այս դեպքում ի նկատի ունենք Գրքի խոսքերը, և ոչ՝ դա մեկնաբանողների խոսքերը, որոնք կարող են տարբեր մեկնաբանություններ տալ (թե՛ դրական, թե՛ բացասական)՝ կախված իրենց սուբյեկտիվությունից):

3. Ղեւտացոց 20:13 «Եւ եթե մարդ մը իք կնոջ հետ պառկելու պէս արուի հետ պառկի, երկուքն ալ պղծութիւն ըրին. անշուշտ պետք է մեռցուին: Անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ»:

Այստեղ էլ արդեն ակնառու է, որ խոսվում է ամուսնացած տղամարդկանց մասին: Եթե ինչպես կնոջը հետ ես պառկում անկողին, այնպես էլ՝ արուի, մեղք ես գործում: Այսպիսով, այս խոսքն արգելում է ԱՄՈՒՄՆԱՅԱԾ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ¹⁵ սեռական հարաբերություններ ունենալ արուների հետ... սակայն այդ «իր»ը չկա Նոր Կտակարաններից որոշներում ... քրիստոնեական ժողովարաններում կամ եկեղեցիներում (որոնք անարդարացիորեն երբեմն կոչում են Աստծո Տաճար¹⁶): Հավաքների ժամանակ «հովվի» կողմից «հոտին» գրավող ամենագեղեցիկ ու արդար գաղափարներից է հետևյալը, որ շատ է կրկնվում. Աստված անփոփոխ է ու նույնը՝ բոլորի նկատմամբ, երեկ, այսօր, վաղը: Եթե Աստված նույնն է ու անփոփոխ, ինչո՞ւ է նրա խոսքը փոփոխական: Ցավալի փաստ է, որ ցայսօր էլ նույնասեռական տղամարդկանց նրանց կամքին հակառակ կամ էլ որպես «հոմոսեքսուալիզմից» բուժելու թերապիա օգտագործվում էր և այսօր էլ օգտագործվում է կնոջ հետ ամուսնացնելը (այլ մեթոդներից է նաև կին մարմնավաճառների «օգնությամբ» «բուժումը», որը իրականում չի «բուժում». եթե խնձորենու ծառ ես տնկել, այն չես կարող տանձենի դարձնել, նույնպես էլ նույնասեռական ծնվածը (ոչ երկսեռականը) չի կարող տարասեռական դառնալ, ծառերի դեպքում կարող են պատվաստել, և կարող է նոր տեսակի պտուղ ծնվել, սակայն դա չի՛ լինի ո՛չ տանձ, ո՛չ էլ խնձոր): Երբեմն էլ նույնասեռական տղաներն իրենք են ամուսնանում կանանց հետ՝ խուսափելու համար հալածանքներից, հոմոֆոբիայից, ծաղր ու ծանակից, սպառնալիքներից՝ անհիմն ու երբեմն հիմնավոր... նրանք վարում են երկակի կյանք: Կարո՞ղ են նման ընտանիքները լիարժեք լինել: Կարո՞ղ է կինն իրեն իսկական կին զգալ, բավարարված լինել անկողնում և անձնական ու հասարակական կյանքում: Մեծագույն օրինակ է մի քրիստոնեա հոգևորական՝ Մել Ուայթը, որ պատմում է.

¹⁵ Եվ նորից, կատարվել է մի խոշոր փոփոխություն, որը նշանակալից փոփոխել է (եթե չասենք՝ աղավաղել) այս նախադասության իմաստը. «20:13 Եթե որևէ տղամարդ մի այլ տղամարդու հետ պառկի, ինչպես կնոջ հետ, նրանք պղծութիւն գործած կը լինեն»: Դուրս են հանել «իրը» (իր կնոջ հետ), ուստի այստեղից բխում է, որ այս տողն արդեն վերաբերում է բոլոր տղամարդկանց: Էլի արևմտահայերեն ու արևելահայերեն Բիբլիաների հակասություն (ինչն ավելի անհավանական է), կամ հուններեն, արամեերեն, եբրայերեն Բիբլիաների հակասություն, թե՛ փոփոխություն, խմբագրում:

¹⁶ Որովհետև պատմականորեն քրիստոնյաները ոչնչացրել են պատմական հեթանոսական տաճարները. եթե մեկը պայքարում է միապետության դեմ, հետո սպանելով միապետին ինքն իրեն է միապետ անվանում... դա բարոյական է: Բարոյական է քրիստոնեական «εκκλησία»-ները (որտեղից էլ հայերեն «եկեղեցի» բառը) «տաճար» կոչելը... ո՛չ: Եկեղեցին եկեղեցի է, տաճարը՝ տաճար:

«Հեշտ չէր ընդունել ինքս ինձ, որովհետև ինձ շրջապատող մարդիկ, ովքեր Բիբլիան տառացիորեն էին ընկալում և դատապարտում էին ինձ, ստիպեցին անցնել բոլոր տեսակի թերապիաների միջով, որպեսզի ձերբազատվեմ հոմոսեքսուալությունից, որպեսզի քշեմ «հոմոսեքսուալիզմի դևին»: Ես անցա էկզորցիզմի, էլեկտրաշոկի, ամեն տեսակի «մաքրող» թերապիաների միջով, օրինակ՝ ուտել ահավոր համի բաներ, երբ տեսնում ես գեղեցիկ նույնասեռական տղամարդ, տղամարդ, որ գեղեցիկ էր քեզ համար: Ես անցա այդ ամենի միջով և վերջապես ընկա հիվանդանոց և **20 տարվա կինս** ասաց. «Գիտես, դու գեյ ես: Դու փորձեցիր: Ես ընդունում եմ գեյ տղամարդկանց, ես ուղղակի չէի ուզում, որ դու լինեիր դրանցից մեկը, բայց դու այդպիսին ես, ուստի ես **քեզ եմ տալիս քո ազատությունը**», և մենք մոտ ընկերներ ենք եղել դրանից հետո»: Հետագայում 26 տարի նա ապրել է իր սիրելի տղամարդու հետ, ցայսօր էլ կենդանի է ու ծառայում է Արարչին՝ սիրո հրովարտակ ու ավետիս ուղարկելով նույնասեռականներին՝ նշելով, որ սեռական կողմնորոշվածությունը (այդ թվում և՛ նույնասեռական) պարզ և, ու ոչ թե՛ պատիժ: ¹⁷

Կա ևս մի **շատ** կարևոր փաստ, որ պետք է հաշվի առնել, երբ խոսում ենք Ղևտացոց գրքի մասին. սա մի կանոնագիրք էր, որը ի սկզբանե, հազարամյակներ առաջ, գրվել էր Ղևտացոց համար, Ղևտացոց կամ Լևիտների, որոնք Իսրայելի բարձրագույն հոգևորականներն էին, նրանք ունեին սեփական ենթամշակույթը, կանոնները, նույնիսկ՝ քաղաքները, ինչպես, օրինակ, նշվում է Ղևտացոց 25:32 խոսքում. «Ղևտացիների քաղաքներում գտնուող տները, որոնք նրանց կալուածքներն են այդ քաղաքում, կարող են միշտ յետ գնուել ղևտացիների կողմից»: Այսպիսով, արդյո՞ք մենք ՀՀ-ում գործադրում ենք, օրինակ, ԱՄՆ-ի Մահմանադրությունը կամ էլ, ասենք, Ղուրանով տրված օրենքներ, թե՛ մենք ունենք այլ սահմանադրություն, որը այլ է, տարբեր: Նույն ձևով Ղևտացոց գիրքը ստեղծվել է Ղևտացիների համար, հազարամյակներ առաջ, և այսօր շատ օրենքներ, որ գրանցված են Ղևտացոց գրքում, անընդունելի են ժամանակակից հասարակության համար: Իսկ եթե չենք ընդունում, օրինակ, Ղևտացոց 11:7 խոսքը, որ արգելում է խոզի միս ուտելը, կամ նույն գլխի 19:19 խոսքը. «Պիտի պահպանեք իմ այս օրենքները: Չթողես, որ քո անասունը այլ տեսակի անասունի հետ խառնակուի: Քո այգում տարբեր սերմեր մի՛ ցանիր: Երկու տարբեր նիւթերից գործուած գարշելի զգեստներ մի՛ հագիր»: Կամ 19:27 «Ձեր գլխի մազերը մի՛ հիւսեք և ձեր մօրուքին ձև մի՛ տուէք»... Եթե Ղևտացոց օրենքներով քննադատենք նույնասեռականներին, ապա նույն հաջողությամբ կարելի է քննադատել նրանց, ովքեր հյուսում են իրենց մազերը, կամ մորուքին ձև տալիս, և մյուսներին: Բացի վերոնշյալից, հաշվի առնենք, որ խոսքերը վերաբերում են հրեական հասարակությանը, ընդ որում՝ հազարամյակներ առաջ գոյություն ունեցած հասարակության մի մասնիկին, որն ուներ սեփական ենթամշակույթը: Ընդամենը մեկ օրինակ. Ղևտացոց 19:34 «Ձեր երկրի տեղաբնակի պէս ընդունեցէ՛ք նրան, և եկուորը թող բնակուի ձեզ մօտ: Նրան սիրի՛ր քո անձի պէս, որովհետև դուք էլ պանդուխտ եղաք Եգիպտացիների երկրում»: Կան օրենքներ, որ այսօր էլ կիրառելի են, սակայն կան և շատերը, որոնք անկիրառելի են՝ հաշվի

¹⁷ Այստեղ կարող եք դիտել և լսել հոգևորականի պատմությունն իր մասին
<http://ourmine.wordpress.com/2010/03/19/gaymoral/>

առնելով ժամանակը, մշակույթը, և այլ գործոններ: Նույնպես էլ նույնաստեղծականությունն այլևս անընդունելի չէ, ինչպես անընդունելի է ստրուկներ պահելը, որին Բիբլիան դեմ չէ ըստ գրավոր խոսքի...

Հենց վերոնշյալի պատճառով է, որ մենք բարոյական իրավունք չունենք ընդհանուր բովանդակությունից հանել և առանձին-առանձին մեջբերել այն խոսքերն ու հատվածները, որոնք մեզ են դուր գալիս: Հակառակ դեպքում... օրինակ. Ղևտացոց 25:44-46 «Ինչ ծառայ կամ աղախին էլ որ ուզենաս ունենալ, քո շուրջը եղող ազգերից կը վերցնես, ⁴⁵ինչպես և ձեր մեջ ապրող օտարականների գաւակներից ու նրանց ազգականներից: Որքան գաւակ ունենան ձեր երկրում, բոլորը թող դառնան ձեր սեփականութիւնը: ⁴⁶Նրանց իբրև ժառանգութիւն կը յանձնէք ձեր գալիք սերունդներին, նրանք առյաւէտ ձեր ստրուկները թող լինեն: Ձեզնից ոչ ոք իր եղբայրներին՝ իսրայէլացիներին, չարչարանքով թող չտանջի», Ելից 21:2-6 «Եթէ գնես եբրայեցի մի ստրուկ, վեց տարի նա թող ծառայի քեզ և եօթներորդ տարում առանց փրկագնի ազատ թող արձակուի: ³Եթէ նա միայնակ է տունդ մտել, միայնակ էլ թող գնայ, իսկ եթէ իր կնոջ հետ է մտել, կինն էլ թող գնայ նրա հետ: ⁴Եթէ իր տէրը նրան կին տայ, և կինը նրա համար տղաներ և աղջիկներ ծնի, ապա կինն ու գաւակները թող պատկանեն նրա տիրոջը, իսկ նա թող գնայ միայնակ: ⁵Եթէ ստրուկն առարկելով ասի, թէ՝ «Միբեցի իմ տիրոջը, իմ կնոջն ու իմ գաւակներին և ազատութիւն չեմ ուզում», ապա նրա տէրը նրան թող կանգնեցնի Աստծու ատեանին, ⁶այնուհետև բերի իր տան դռան սեւի մօտ, հերիւնով ծակի նրա ականջը, և նա նրան թող ծառայի ցմահ», Ելք 21:7-9 «Եթէ որևէ մէկն իր աղջկան որպէս աղախին վաճառի, ապա այդ աղջիկը թող չազատագրուի, ինչպէս ազատագրում են ստրկուհիները: ⁸Եթէ այդ աղախինը, որը սահմանուած էր իր տիրոջ համար, այլևս հաճելի չլինի նրան, ապա Տէրը թող փրկագնով վաճառի նրան, բայց օտարազգի մարդու վաճառելու իրաւունք չունի, թէ չէ նրան անարգած կը լինի: ⁹Եթէ նա իր գնած աղախինն սահմանել է իր որդու համար, նրա հետ թող վարուի այնպէս, ինչպէս վարում է իր դուստրերի հետ»: ԱՎԵԼԻՆ. ստրկության գաղափարը պաշտպանում է ոչ միայն Հին Ուխտը (Կտակարանը), այլև՝ Նորը. Պօղոս Առաքեալի Թուղթը Եփեսացիներին, 6:5. «Ծառանէ՛ր, հնազա՛նդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին ահով և դողով և անկեղծ սրտով, ինչպէս հնազանդ էք Քրիստոսին», Պօղոս Առաքեալի Առաջին Թուղթը Տիմոթէոսին, 6:1. «Բոլոր նրանք, ովքեր ծառայութեան լծի տակ են, նրանցից իւրաքանչիւրը թող իր տէրերին պատուի արժանի համարի, որպէսզի Աստծու անունն ու վարդապետութիւնը չանարգուի», Ղուկաս, 12:47. «Իսկ այն ծառան, որ գիտէ իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստի, շատ ծեծ կ'ուտի: ⁴⁸Եւ այն ծառան, որ չգիտէ իր տիրոջ կամքը և ծեծի արժանի գործ է կատարում, քիչ ծեծ կ'ուտի. նրան, ում շատ է տրուած, նրանից շատ էլ կ'ուզուի, և ում շատ է վստահուած, նրանից ակելին կը պահանջեն»:

Այսպիսով, եթե վերցնենք բոլոր վերևում բերված հատվածները Հին և Նոր Կտակարանից, որոնք վերաբերվում են ստրկությանն ու ծառաներին, ապա այսօր մարդավաճառությամբ զբաղվող բոլոր նրանք, ովքեր իրենց քրիստոնեա են համարում, կարող են արդարանալ և նշել, որ քրիստոնեական բարոյական տեսանկյունից լրիվ ընդունելի է ստրուկներ պահելն ու ունենալը, և որ մարդավաճառությունը վատ բան չէ:

Սակայն եթե բոլոր վերոնշյալ հատվածները դիտարկենք *ընդհանուր բովանդակությունից*, ապա կրնդունենք, որ այսօր այս հատվածները հնացած են ու անկիրառելի: Նույն հաջողությամբ է, որ մեկը կարող է դատապարտել նույնասեռականությունը՝ *ընդհանուր բովանդակությունից* հանված բառերով, իսկ մյուսը՝ արդարացնել ստրկատիրությունը:

Հին Կտակարանն արգելում է արվամոլությունը, արվագիտությունը և արվակնությունը, սակայն՝ ոչ նույնասեռականությունը: Վերջին երկու տերմինի մասին. առաջին բառը հանդիպում է Աստվածաշնչում¹⁸ (արևմտահայերենում): Կան նույնասեռական և երկսեռական տղամարդիկ, որոնք սիրում են «թարմ միս» կամ «թարմ արյուն» ճաշակել: Դա նման է որսի իրենց համար: Հենց նման կերպով էլ ես ընկալում և իմաստավորում (վերաիմաստավորում) եմ այս տերմինը: Արվագետ-արու որսացող (ցանկացած արու՝ անկախ տարիքից, սոցիալական կարգավիճակից, սեռական կողմնորոշվածությունից և այլ հատկանիշներից): Փաստ է, որ այսօր գեյ պոռնոգրաֆիաներում ներգրավված տղամարդկանցից ոմանք ընդհանրապես նույնասեռական չեն, ոմանք դա անում են ուղղակի գումար վաստակելու համար: Այն «պրոդյուսերները», որոնք որսում են նման տղամարդկանց և ներառում նման ֆիլմներում, արվագետներ են¹⁹: Պատճառները կարող են տարբեր լինել. փող, ուղղակի շեղվածություն կամ այլասեռվածություն, անբավարարվածություն:

Արվակնություն – Կիրք դեպի կին ձևացող տղամարդը: Արվակնացնողն էլ այն տղամարդն է, ով համոզում կամ ստիպում է իր գուզընկերոջը կին ձևանալ իրենց սեռական հարաբերությունների ժամանակ: Տարբերությունը տրանսվեստիզմի և արվակնության մեջ տեսնում եմ նրանում, որ երկրորդը ստիպողաբար է, առավել արհեստական և ավելի քան ձեռքբերովի՝ (երբեմն) ընդդեմ արվակնացողի ցանկության, իր արվակնացնող գուզընկերոջը բավարարելու համար: Տրանսվեստիստն ազատ է իր ընտրության մեջ, եթե ցանկանում է սեռափոխ լինել՝ իր որոշումն է: Իսկ արվակինը դա տրանսվեստիստ չէ. դա իր ընտրությունը, իր ներքին կոնֆլիկտը չէ, դա «արուի հետ՝ կնոջ հետ պատկելու պես» ցանկություն ունեցողի քամահրանքն է, կիրքը, նրա ստեղծած էակը. դրանք պատմականորեն «ստեղծված» (հաճախ՝ ամորձատված) տղամարդիկ և նմանատիպ անհատներն են (թերևս, խստորեն պարտադիր չէ՝ ամորձատված), որոնց մասին նշում է նաև Քրիստոսը (Մատթեոսի Ավետարանում):

Այսպիսով, ըստ Աստվածաշնչի, Աստծո արքայությունը չեն ժառանգելու արվագետները... դժվար թե արվակնացնողները ժառանգների ցուցակում լինեն (բայց ոչ, հավանաբար, արվակնացողները, եթե իրենց ստիպել են): Իսկ նույնասեռականների կամ այրասերների մասին խոսք չկա (եթե խոսքերը մեկնաբանողները, իհարկե, դրանք չեն վերագրում նաև նույնասեռականներին, ինչը, հաստատ, Բիբլիայից դուրս է, իրենց մեկնաբանությունն է):

¹⁸ Ընդունելով Բիբլիան Աստվածաշունչ անվանելու այլընտրանքը՝ հեղինակն այնուամենայնիվ գերադասում է գործածել Բիբլիա տերմինը:

¹⁹ Markku Heikkinen, “All Boys”.

Որոշ Բիբլիաներում այս պատմությունը նկարագրվում է Սամվելի Գրքում (Ա և Բ), որոնք երբեմն վերափոխվել և վերանվանվել են «Թագավորաց Գրքերի» (մեզ հետաքրքրում են Ա և Բ գրքերը):

Թագավորություններ Ա. «18 Երբ Դավիթը Սաուլի հետ խօսակցութիւնը վերջացրեց, Յոնաթանը հոգով կապուեց Դավթին: ²Յոնաթանը նրան իր անձի պէս սիրեց: Նոյն օրը Սաուլն իր մօտ վերցրեց նրան ու չթողեց, որ նա վերադառնայ իր հօր տունը: ³Յոնաթանը Դավթի հետ ուխտ դրեց, քանզի Յոնաթանը նրան իր անձի պէս էր սիրում: ⁴Յոնաթանն իր թիկնոցը հանեց ու տուեց Դավթին, նաև իր զինուորական համազգեստը, նոյնիսկ իր սուրը, աղեղն ու գոտին»:

Հովնաթանը հոգով կապվեց Դավթին... Հովնաթանը նրան իր անձի պէս սիրեց... հետը ուխտ դրեց, տվեց թիկնոցը, զինվորական համազգեստը, նոյնիսկ՝ սուրը, աղեղն ու գոտին...նոյնիսկ իր սուրը, աղեղն ու գոտին: Դեռևս Հին Հռոմում էր, որ «Գլադիոս» (այստեղից էլ՝ գլադիատոր բառը) նշանակում էր ոչ միայն սուր, այլև՝ առնանդամ: Սուրֆալլոս համեմատությունն ու համադրումը հինավուրց է: Տղամարդու զենքը, չէ՞ որ դա իր առնականության խորհուրդն է... և զենքը՝ առնականությանդ խորհուրդը, հանձնել ուրիշին... դա մեծագույն սեր էր, երբ չքանում են բոլոր հասարակական տաբուներն ու արգելքները, հասկացությունները... երկու անհատի միջև, իրենց մտերմության մեջ, էլ ոչ մի պատնեշ չի մնում, անձնագոհական նվիրում, երբ դիմացինիդ ես հանձնում քեզ համար ամենաարժեքավորը, երբ ինքդ ես նվիրվում իրեն՝ հոգիդ իր հոգու մեջ դնելով, և իր հոգին ընդունելով քո մեջ: Թերևս հայերեն տարբերակում մի քիչ ավելի են քողարկված նրանց փոխհարաբերությունները, և, օրինակ, անզլերեն տարբերակում դա ավելի ցայտուն է երևում. չնայած տեքստային տարբերությունները դժվար կլինի էական կոչել, այնուամենայնիվ...

...Then Jonathan made a covenant with David because he loved him as himself. Jonathan stripped himself of the robe that was on him and gave it to David ([1 Sam. 18:1-4](#))...

...Հետո Հովնաթանը ուխտ դրեց Դավթի հետ, որովհետև նա սիրեց նրան ինչպես ինքն իրեն: Հովնաթանը հանեց իր հագուստը (բառացի՝ մերկացրեց ինքն իրեն հագուստից, որ իր վրա էր) և այն տվեց Դավթին:

Այստեղ առկա են հուզական զգացմունքերը (հոգին հոգու մեջ, ուխտ), ինչպես նաև ֆիզիկական կապվածությունը և զուտ ֆիզիկական կամ նյութական ակտերը. բացի նրանից, որ Հովնաթանը Դավթին իր հագուկապն է նվիրում, նոյնիսկ՝ զենք ու զրահն ու գոտին, հետագայում տեղի է ունենում հետևյալը.

Հովնաթանը փրկում է Դավթի կյանքը մի քանի անգամ, 20:4 խոսքում Հովնաթանը Դավթին ասում է. «Դու ինչ որ կը կամենաս, ես կ'անեմ քեզ համար» (չնայած այս հատվածում դա վերաբերում է Դավթի կյանքը փրկելուն, և դժվար թե կոնկրետ այդ մասը կարելի է մեկնաբանել որպես զուտ հոմոէրոտիկ): 20:17 «Յոնաթանը Դավթին կրկին՝ երդուեցրեց իր սիրով, քանզի նրան իր անձի պէս էր սիրում»: Երբ Հովնաթանը հորից՝

Սավուդից թույլատվություն է խնդրում գնալու համար Բեյտլեհեմ (Բեթլեհեմ կամ Բեթլեհեմ), Հովնաթանի մոտ, Սավուդը գայրանում է. 20:30 «Պոռնկորդի՛, մատնի՛չ, միթե չգիտե՞մ, որ դու դաշնակից ես Յեսսեի որդուն: Դա ամօթ ու խայտառակություն է քեզ համար և քո մօր սեռական մերկութեան համար»: Սակայն ասվում է, որ Դավիթն ու Հովնաթանը ուխտ էին կնքել, և ոչ թե՛ դաշինք: Ինչո՞ւ է հայերեն Բիբլիայում (մի դեպքում) ուխտ կնքած մարդը (մյուս դեպքում) անվանվում դաշինք ունեցող: Եվ նորից, եթե համեմատենք անգլերեն Բիբլիայի տարբերակներից մեկի հետ, ապա այստեղ նորից կան տարբերություններ. «You son of a perverse, rebellious woman! Do I not know that you have chosen the son of Jesse to your own shame, and to the shame of your mother's nakedness?»: Անգլերեն տարբերակը կարելի է այսպես թարգմանել. «...Ես չգիտե՞մ, որ դու ընտրել ես Յեսսեի որդուն՝ ի ամոթ քեզ, և ի ամոթ քո մոր մերկության»:

Հետո, 20:41 «... իսկ Դավիթն Երզաբ կոչուող քարից դուրս եկաւ, իր երեսի վրայ գետին ընկաւ և նրան (Հովնաթանին) երեք անգամ երկրպագութիւն արեց: Նրանք իրար համբուրեցին, և ամեն մեկն իր ընկերոջ համար երկար ժամանակ լաց եղաւ: ⁴²Յոգաբանն ասաց Դավթին. «Գնա՛ խաղաղութեամբ, ինչպէս որ մենք Տիրոջ անուամբ երդուեցինք՝ ասելով, որ Տէրը յաւիտեան վկայ լինի իմ ու քո միջև և իմ զաւակի ու քո զաւակի միջև»: ⁴³Դավիթը վեր կացաւ ու գնաց, իսկ Յոգաբանը մտաւ քաղաք»:

Համբուրվեցին, հետո միասին երկար ժամանակ լացեցին: Մի՞թե սա ակնհայտ հոմոերոտիզմ չէ:

Խոսվում է նաև իրենց սերունդների կամ զավակների մասին. ազնվական տղամարդիկ ընտրություն չունեին: Կնոջ հետ ամուսնանալը պարտականություն էր, պարտք՝ ազգի առջև. նրանք պարտավոր էին ամուսնանալ՝ սերունդը շարունակելու համար: Հենց այս պարտքի պատճառով էր հավանաբար, որ Ալեքսանդր Երկրորդի որդի, նույնասեռական Նիկոլայն ինքնասպան եղավ՝ չամուսնանալու համար կնոջ հետ...

Իսկ Հովնաթանի մահվան կապակցությամբ Դավիթը հետևյալն է ասում ողբալիս. Բ Թագավորաց 1:26 «Ցաւում եմ քեզ համար, եղբա՛յր իմ Յոգաթան: Ինձ շատ սիրելի էիր, քո սէրը կանանց սիրուց բարձր էր»:

Դավթի համար Հովնաթանի սերն ավելի բարձր էր, քան կանանց սերը...

Թերևս Դավթի ու Հովնաթանի սիրո հարցում կարելի է մեկ-երկու ակնհայտ համեմատականների մասին խոսել նաև. «Հովնաթանի հոգին Դավթի մեջ էր»: Հետագայում, Վերածնության կամ Վերածննդի դարաշրջանում էր, որ Միքելանջելո Բուոնարոտին իր տասնյակ հոմոերոտիկ սոնետներից (ավելի շուտ, այս դեպքում դա մահվան էպիգրամ էր) մեկում ողբալով իր վաղամեռիկ սիրեկանի մահը՝ ասում է.

Բնագիր.

“La carne terra, e qui l’ossa mia, prive
de’ lor begli occhi, e del leggiadro aspetto
fan fede a quel ch’i’ fu grazia nel letto,
che abbracciava, e’ n che l’anima vive.”

Անգլերեն.

“The flesh now earth, and here my bones,
Bereft of handsome eyes, and jaunty air,
Still loyal are to him I joyed in bed,
Whom I embraced, in whom my soul now lives.”²⁰

Հայերեն.

«Մարմինը՝ հող, և ահա իմ ոսկորները,

Զրկված գեղեցիկ աչքերից, և կայտառ տեսքից,

Դեռևս նվիրված են իրեն, ու՛մ ես վայելեցի անկողնում,

Ու՛մ ես գրկեցի, ու՛մ մեջ հիմա ապրում է իմ հոգին»²¹:

Միքելանջելոն սա նվիրել է իր վաղամեռիկ սիրեկան, 16ամյա Կեչինո դեի Բրաչչինո (Cecchino dei Bracci): Ու նորից խոսվում է մեկի հոգին մյուսի մեջ գտնվելու մասին՝ որպես նույնասեռական և՛ մարմնական, և՛ զուտ պլատոնական սիրո խորհուրդ:

Եվ մեկ այլ համեմատական է ծնվում. երբ Պատրոկլուսը՝ Աքիլեսի սիրեկանը, սպանվում է Տրոյայի ճակատամարտերից մեկի ժամանակ, Աքիլեսը ողբում է և ասում, որ Պատրոկլուսի սերն իր համար բարձր էր ցանկացած կնոջ սիրուց, ինչը նկարագրված է «Իլիականում»: Սա էլ համանուն է Դավթի արած արտահայտությանը Հովնաթանի մահվան կապակցությամբ:

Պատմականորեն Դավթի և Հովնաթանի սերը մեկնաբանվել է որպես զուտ պլատոնական սեր, կամ տղամարդկային ընկերություն, այնուամենայնիվ, մի շարք հատվածներ (Հովնաթանի մերկանալը Դավթի առջև, հոգիների «միակցումը», ամենաթանկ և տղամարդկային առնականությունն ընդգծող պարագաների՝ զենք ու զրահի դիմացինին նվիրելը, միասին համբուրվելը և երկար ժամանակ լացելը) ցույց են տալիս, որ հարաբերությունը զուտ պլատոնական չէր: Հիշենք նաև Սավուղի ամոթանքը Հովնաթանին, ուր նշվում է մերկության մասին: Չնայած Սավուղն ասում է՝ դա «ամոթ է քո մօր սեռական մերկութեան համար», որոշ հետազոտողներ կարծիք են հայտնել, որ սրանով Սավուղը կարող էր մատնանշել, որ տեսել է Դավթին ու Հովնաթանին միասին՝ մերկ: Սա նույնասեռական սեր է, և սա ցույց է տալիս, որ հնագույն ժամանակներում պատժելի էին սոդոմականությունը, շնությունը, արվամոլությունը, պոռնկությունը, սակայն՝ պատժելի չէր նույնասեռականությունը, նույնասեռական սերը, նույնասեռական միությունը (կամ նույնասեռական ամուսնությունը/դաշինքը):

²⁰ <http://www.oliari.com/storia/michelangelo.html>

²¹ Թարգմանությունն ըստ հեղինակի:

Նոր Կտակարանում Պողոսն է, որ դատապարտում է արվամոլությունը: Միգուցե արվագետ (կամ արվամոլ՝ կախված կոնկրետ Բիբլիայից) ասելով՝ նա ի նկատի ուներ բոլոր նույնասեռականներին, հատկապես եթե հաշվի առնենք, որ նա խոսում է նման կապերի «անբնական» լինելու մասին: Համասեռականության անբնական լինելը երկար դարեր է, ինչ օգտագործվում է որպես «փաստ»՝ ընդդեմ նույնասեռականության: Մեր օրերում մենք արդեն գիտենք, որ դա անբնական չէ. մոտ 230 տեսակի կաթնասուն և ընդհանուր թվով մոտ 1500 տեսակի կենդանիներ դրսևորել են տվյալ տեսակի սեռական վարքագիծ, ընդ որում՝ հաճախ գիտնականները թաքցնում էին նման փաստերը, կամ տալիս այլ մեկնաբանություններ՝ վախենալով, որ պախարակված կլինեն: Օրանգուտանները ոչ միայն ծառի կեղևներից են ստեղծում դիլդոներ՝ սեռահարաբերության նմանակման համար, այլև զբաղվում են բերանային սեքսով: Հավանաբար, Քրիստոսի Պողոս աշակերտը չգիտեր դրա մասին (ոչ թե օրանգուտանների, այլ ընդհանրապես նույնասեռական կենդանիների գոյության մասին), հակառակ դեպքում տվյալ երևույթը չէր անվանի հակաբնական, «բնական կարգի դեմ»: Այսօր էլ շատերը կամ չիմանալու պատճառով, կամ ապատեղեկատվության, կամ էլ արմատավորված հումֆորբիայի պատճառով խաբսվում են՝ կարծելով նույնասեռականությունն անբնական է, դեմ է բնական կարգին: Հենց այս մեղադրանքով էր, որ տասնյակ (եթե ոչ հարյուր) հազարավոր մարդիկ են խոշտանգվել, պատժվել, մահապարտվել: Հետաքրքիր և, այնուամենայնիվ, սպասելի ռեակցիա է, երբ ծանոթանալով այս տվյալների հետ, ոմանք ասում են՝ հետո ի՞նչ, մենք հո կենդանի չե՞նք: Մասամբ ճշմարիտ է, սակայն մենք դասվում ենք բարձր տեսակի կաթնասունների դասին, և իր զարգացման սկզբնական շրջանում մարդու սաղմը տարբեր չէ մյուս կենդանիների սաղմերից: Մարդն ըստ քրիստոնեության կատարյալ չէ, միշտ էլ սխալվում է: Առաքյալներն էլ ընդամենը մարդիկ էին (Քրիստոսն ինքն իրեն էլ Մարդու Որդի է անվանում): Ուստի, առաքյալներն էլ կարող էին սխալվել:

Առաջին երկու խոսքում է, որ նա (Պողոսը) խոսում է նման կապերի և հարաբերությունների անբնական լինելու մասին՝ դրանք դատապարտելով:

Երրորդ դեպքում նա հիշեցնում է, որ արվագետները, ինչպես և, օրինակ, պոռնիկները, չեն ժառանգելու Աստծո թագավորությունը: Հետաքրքիր է՝ Քրիստոսն ինքը, Մարիա Մագդաղենացի պոռնիկին քարկոծումից փրկած Մարդ-Աստվածը, կարդարացնե՞ր Պողոսի նման կոշտ հայտարարությունը: Արդյո՞ք Քրիստոսը մոտեցավ Մագդաղենացուն և Պողոսի պես բղավեց նրա դեմքին՝ դու, պոռնիկ, դու Աստծո Արքայությունը չե՛ս ժառանգելու: Բնա՛վ:

Չորրորդ դեպքում Պողոսն ընդգծում է օրենքի կարևորությունը՝ վերջում հավելելով. «...եւ թէ ուրիշ ոեւէ բանի որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան»: Այս բառերը կարևոր են: Յանկացած անհատ կամ երևույթ, որ դիտարկվում է իրենց վարդապետության դեմ՝ ապօրինի է, անբնական, անընդունելի: Նույնասեռականությունը, ցավոք, արվամոլության, արվագիտության, արվակնության հետ հավասար դիտարկվում է որպես հնարավոր վտանգ շատ եկեղեցիների կողմից: Սակայն արդեն ոչ բոլոր եկեղեցիներն են այդպես մտածում: Որոշ եկեղեցիներ գիտակցել են, որ լինել նույնասեռ չի նշանակում լինել հակաքրիստոնեա, արվամոլ, արվագետ:

Թուղթ առ հռովմայեցիս 1:27 «Նույնպես ալ արուները կնոջ բնական պետքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան. արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին...»: Սա խիստ կասկածելի խոսք է. կամ Պողոսը տեսել է այդ ամենը՝ այցելելով իր ժամանակվա «Գէյ բառերը», գուցէ՝ տաճարներ, ուր նույնասեռական փոխհարաբերություններն ու օրգիաները գործածվել են կրոնական և միաստիկ նպատակներով: Կամ էլ Պողոսն այս ամենը տեսել է փողոցներում: Երրորդ տարբերակն էլ՝ նրան պատմել են այս ամենի մասին: Առաջին դեպքում խիստ կասկածելի է, որ նման հակումներ չունեցող մարդն այցելի նման տեղեր: Երկրորդ դեպքում՝ խոսքը քառասուն տարեկան արվամոլության, արվագիտության մասին է, երբ նույնասեռական և SUS²² տղամարդիկ չէին խորհում բարոյականության ու հասարակական նորմերի մասին և տրվում էին իրենց կրքերին հենց փողոցներում, ինչն անշուշտ անընդունելի է և՛ նույնասեռականների, և՛ տարասեռականների դեպքում: Երրորդ դեպքում էլ նրա տված տեղեկատվությունը գալիս է երկրորդական աղբյուրներից, որոնք քիչ վստահելի էին, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հին Հռոմն ուներ օրենքների գրքեր ու գրքեր՝ մինչև քրիստոնեությունը, իսկ հրեաներն էլ Հռոմեացիներին գրկաբաց չէ, որ ընդունում էին, ուստի շատ հնարավոր է նաև, որ սա պատմության աղավաղում է կամ ծայրահեղացում: Հարկ է հասկանալ՝ ի՞նչ է իրականում եղել: Արդյո՞ք Հռոմն իրոք խորտակվել էր անբարոյականության մեջ, թե՞ սա վիրավորված ու մերժված քրիստոնեայի պատասխան է այն մարդկանց, ովքեր հրաժարվել են հրաժարվել իրենց ավանդական, պատմական, մշակութային հարուստ ժառանգությունից և ընդունել միաստվածություն, այն էլ՝ եռադեմ միաստվածություն:²³

Որպես ամփոփում տվյալ կարևոր թեմայի՝ ասենք.

- Հին Կտակարանը արգելում է արվամոլությունը և արվագիտությունը՝ դրանք դիտարկելով որպես հանցանք կամ մեղք, ինչպես, ասենք, գողությունը, առևանգումը, ստախոսությունը: Սակայն խոսք չկա նույնասեռական սերը դատապարտելու

²² Տղամարդկանց հետ Սեռահարաբերություն ունեցող Տղամարդիկ, որոնք չեն դիտարկվում որպես պարտադիր նույնասեռական, ամենաձայրահեղականներն իրենց հայոց մեջ կոչում են ԳՔ, ինչպես նկարագրել էի ավելի վաղ:

²³ Հետաքրքիր է, որ նման մի երևույթ էլ կա բուդդիզմում. Մահայանայում (որը բուդդիզմի հնագույն ճյուղն է) Բուդդան ուներ երեք մարմին (տրիկայա). 1 Կարամկայա (Օրենքի մարմին), որ խորհրդանշում է սկզբնական և անփոփոխ իրականությունը, 2 Մամբհոկայա (Աստվածության մարմին), որ կապված է Բուդդայի՝ գերբնական արարածների մեջ բնակվելու հետ, 3 Նիրմանակայա (Վերափոխման մարմին), երբ Բուդդան մարդու մարմին էր վերցնում: Սա խիստ նման է քրիստոնեական եռանկյունուն, երբ երեք էություններն էլ իրարից անկախ չեն (հակառակ դեպքում կնշանակի, որ մենք գործ ունենք բազմաստվածության հետ)՝ լինելով մեկը մյուսի լրացումը: Քրիստոնեական եռանկյունին կարելի է համեմատել բուդդիզմի այս գաղափարի հետ. Կարամկայա – Հայր Աստված, Մամբհոկայա – Սուրբ Հոգի, Նիրմանակայա – Քրիստոս (կամ էլ առաջին երկուսի տեղերը փոխած): Այսօր որոշ հուդայականներ նշում են, որ քրիստոնեական եռադեմ միաստվածությունը վերցվել է հենց բուդդիզմից, իսկ բուդդիզմը դա մարդաստեղծ կրոն է, ուստի՝ ոչ ճշմարիտ: Հենց սա էլ պատճառներից մեկն է, որ ծայրահեղական հուդայականները չեն ընդունում քրիստոնեությունն ու քրիստոնեաներին՝ նրանց ուսմունքը դիտարկելով որպես մարդածին ու կեղծ:

մասին, ավելին՝ առկա է Դավթի ու Հովնաթանի պատմությունը, որ կարող է տարբեր ձևերով մեկնաբանվել՝ զուտ պլատոնական հոմոէրոտիզմից կամ հոմոսոցիալիզացիայից մինչև նույնասեռական սեքս՝ իր էմոցիոնալ և ֆիզիկական բաղադրիչներով ու դրսևորումներով:

Եվ սա բավականին ողջամիտ դիրքորոշում է՝ դատապարտել արվամոլությունը. արվամոլությունը մոլուցք է, որը չպետք է ողջունել կամ պաշտպանել: Առաջին դեպքում արվագետները փորձել են բռնաբարել հյուրերի, երկրորդ դեպքում արվակնությունն է դատապարտվում, երրորդ դեպքում ամուսնացած տղամարդիկ են դավաճանել իրենց կանանց²⁴: Եվ բոլոր երեք դեպքերն էլ ճշմարիտ և արդար կերպով են դատապարտում արվագիտությունը, արվակնությունը, արվամոլությունը: Բայց և պետք է հիշել՝ նույնասեռական և արվամոլ/արվագետ/արվակին տարբեր են, և այսօրվա նույնասեռականը դա ավելին է, քան Բիբլիայում նկարագրված մեկ-երկու ծայրահեղական դեպքերում օրինակ բերված տղամարդիկ. այսօր պաշտպանել նույնասեռականների իրավունքները չի նշանակում պաշտպանել սողմականների, արվամոլների, մարմնավաճառ տղամարդկանց իրավունքները: Բնավ:

- Նոր Կտակարանում Պողոսը դատապարտում է արվամոլությունը, սակայն նաև, հավանաբար, նույնասեռականությունը:

Սակայն նրա միակ հիմնարար փաստարկը դա նույնասեռականության բնական կարգին դեմ լինելն է, ինչը իրականում ճշմարիտ չէ, քանզի նույնասեռականությունը բնության անքակտելի մասն է. երբ/եթե մարդկությունն էլ վերանա, նույնասեռականությունը, երկսեռականությունն ու տարասեռականությունը մնալու են բնության մեջ, որպես բնական սեռական կողմնորոշվածություններ, որպես բնության մի մասնիկ: Պողոսը մատնանշում է, որ արվագիտությունը ընդունելի չէ, դեմ է օրենքին, դրանով զբաղվողները չեն ժառանգելու Աստծո թագավորությունը: **Նույնասեռականներն իրենք էլ, ինչպես և բոլոր մյուս անհատները, պետք է պաշտպանված լինեն արվամոլությունից: Բայց դա չի նշանակում նույնասեռական արարված անհատին փորձել «ուղղել»:** Դա նշանակում է տարասեռական և նույնասեռական արարված անհատներին հեռու պահել արվամոլությունից, արվակնությունից, արվագիտությունից ու սողմականությունից, ինչպես՝ ցանկացած այլ մոլուցքից:

²⁴ Խիստ կարևոր է իմանալ՝ ինչո՞ւ է «իրենց կանանց» ձևակերպումը դարձել «կանանց» որոշ Բիբլիաներում: Սա կարևոր հարց է:

Խոսքը երբեմն կյանքի և մահվան հարց է, երբ անգրագետ կամ ծայրահեղական հոգևորականներն ու անհատները Բիբլիայից պոկում են մեկ-երկու պատառ խոսք՝ արդարացնելու համար խտրականությունն ու նույնիսկ նույնասեռականների սպանությունները. Ղևտացոց 20:13 «...իրենց արյունն իրենց ձեռքերի վրա է» խոսքը մեկնաբանելով որպես արդարացում: Թե ո՞ւր է մնում «Մի՛ սպանիր»-ը, դա հարց է: Նույնիսկ երբ խոսքը գնում է «Արջառի ու էշի, ոչխարի ու հագուստի և ամեն տեսակ բաների կորուստներին վերաբերող և վեճ յարուցող խնդիրների» պարզաբանման մասին (Ելք 22:9), ասվում է. «երկու կողմերը թող կանգնեն Աստծու դատաստանի առաջ», դե իսկ մարդ սպանելու գործում, էլ ինչպե՞ս կարող է ինչ-որ մեկը ինքը դատաստան տեսնի անհատի (նույնասեռական անհատի) հետ, եթե ինքը ոչ իսկ դատավոր է, այլ հոգևորական կամ քրիստոնյա (ի՞նչ իրեն այդպիսին է համարում) ու շարքային «գառնուկ»:

Ընդամենը երկու օրինակ նման ծայրահեղականացումներից. 1999թ. հուլիսին Մեթյու Ուիլյամսը (Matthew Williams) և իր եղբայր Թայլերը (Tyler) սպանեցին նույնասեռական գույզի՝ Գերի Մեթսոնին (Gary Matson) և Ուինֆիլդ Մաուդերին (Winfield Mowder), իրենց տանը, Սակրամենտոյի մոտ, Կալիֆոռնիայում: Բանտից իր մոր հետ խոսելով՝ Մեթյուն իր արարքը բացատրեց հետևյալ կերպ. «*Ես ստիպված էի ենթարկվել Աստծո օրենքին՝ մարդու օրենքին ենթարկվելու փոխարեն: Ես չէի ուզում դա անել, ես զգում էի, որ ես պարտավոր էի դա անել: Ես հետևեցի ավելի բարձր օրենքի... ես ընդամենը ծրագրում եմ ինքնասպաշտպանվել Գրեթից*»:

Երբ 1998թ. Մեթյու Շեփերդը (Matthew Shepard) սպանվեց, մի քահանա Հյուսիսային Կարոլինայում հրատարակեց մի բաց նամակ՝ կապված Ահարոն Մքքինիի (Aaron McKinney) գործի հետ, ուր ընթերցում ես հետևյալը. «Նույնասեռականները մահապարտված են: Նրա արյունը մեղավոր է Աստծո առաջ (...անշուշտ պետք է մեռցուին: Անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ): Եթե ինչ-որ մեկը նույնասեռականի է սպանում, նույնասեռականի արյունը իր վրա է, ոչ թե սպանությունն իրագործած անհատի ձեռքերին: Նույնասեռականների արարքներն այնքան տհաճ են Աստծուն: Նրա խոսքն այնտեղ է, և մենք չենք կարող այն փոխել»²⁶: **Այսպիսով, սա երբեմն կենաց և մահու հարց է. տգիտությամբ ամրակայված անգրագիտությունը կարող է լինել իսկական պատուհաս և անբարոյականության ու անկման սկիզբ՝ իբր թե հովանավորվող Սուրբ Գրերով:** Հենց «Սուրբ Գրերով» առաջնորդվելով է, որ կարելի է ստրկատեր լինել ու մարդավաճառության դեմ չպայքարել, հենց Բիբլիայով է, որ կարելի է արդարացնել քարկոծումն ու մարդասպանությունը, ինչպես և այլ մարմնական պատիժներ՝ ընդհուպ մինչև մահապատիժ, հենց «Սուրբ Գրերն» էին մեջբերում Նացիստական Գերմանիայում Երրորդ

²⁵ Քրիստոսն ինքը կոտորում է որոշ հին տաբուներ ու օրենքներ, ինչի պատճառով էլ արժանանում է փարիսեցիների «ուշադրությանը»: Ի՞նչ է Քրիստոսն ասում նույնասեռականության մասին: Ոչի՞նչ, թե՞ ինչ-որ բան ասում է այնուամենայնիվ...

²⁶ Այս օրինակները բերված են Մեյ Ուայթի ավելի վաղ նշված աշխատությունից (տե՛ս 5րդ ծանոթագրությունը):

Ռեյխի գլխավորները... Շեքսպիրն այսպես է ասել. «Նույնիսկ Սատանան կարող է մեջբերել Գիրքը՝ իրեն ծառայեցնելու համար» ('Even the devil can cite Scripture for his purpose'): **ՄԻՄՊԱՆԻՐ:**

Վերոնշյալ կարծիքները և մեկնաբանումները, եթե ընդունելի լինեն և՛ նույնասեռականների, և՛ եկեղեցու կողմից, կարող են լինել վերջին երկուսի համերաշխության, վերամիավորման ու հաշտեցման հիմնասյուները:

Ամենահաստատուն, ամենակայուն ու ամենակարևոր հիմնասյունն, այնուամենայնիվ, կարող է հանդիսանալ մեկ այլ հատված, ինչի համար կա գոնե երկու խիստ կարևոր ու հիմնարար պատճառ.

- I. Դա ասվում է Նոր Կտակարանում. Քրիստոս ասում է, որ եկել է փոխելու Հին Ուխտը (սակայն ոչ կործանելու), ուստի Նոր Ուխտում կա հնի վերաթմուրում, այդ թվում՝ նույնասեռականության վերաբերյալ (նույնասեռականության, և ոչ՝ արվամոլության կամ սոդոմականության):
- II. Դրա մասին խոսում է Նոր Կտակարանի և քրիստոնեության գլխավոր հերոսը՝ Իմանուելը կամ Քրիստոսը, որի խոսքն անշուշտ անհամեմատ ավելի հեղինակավոր է (քրիստոնեայի համար, քրիստոնեության մեջ), քան նրա առաքյալներինն ու ցանկացած այլ քրիստոնեայի ու մեկնիչի խոսք ու միտք:

Մատթեոս 19:12. Որովհետև կան ներքինիներ, որ մօր որովայնից այնպես են ծնուել²⁷. եւ կան ներքինիներ՝ որ մարդկանցից են ներքինացրուել²⁸. եւ կան ներքինիներ՝ որ իրանց ներքինացրին երկնքի արքայութեան համար. ով որ կարող է տանել թող տանի:

Ովքե՞ր են «մօր որովայնից այնպես ծնուած» ներքինիները: Գուցե՝ նույնասեռականները, որովհետև նրանք անկար են կնոջ նկատմամբ²⁹. հենց այս պատճառով է, որ պատմականորեն հարեմներում ներքինիներ էին ծառայում կամ ամորձատված արուները, կամ էլ նույնասեռականները, որոնք վտանգ չէին ներկայացնում կնոջ հետ մերձենալու տեսանկյունից (խոսքը երկսեռականների մասին չէ, այլ՝ նույնասեռականների, որոնց կանայք ընդհանրապես չեն գրավում որպես սեռական գուզրնկեր): Հետևյալ աղբյուրն ու

²⁷ Հետաքրքիր է՝ այստեղ էլ չի նշվում «իբնց մօր որովայնից են այնպես ծնուել», սակայն հասկանալի է՝ խոսքը դրա մասին է: Ուրեմն նույն ձևով է կարելի մեկնաբանել Ղեւտացոց 20:13 հատվածը, որտեղ չի նշվում «իր» բառը, ուստի կարելի է հասկանալ. «Եթե որևէ տղամարդ մի այլ տղամարդու հետ պառկի, ինչպես իբ կնոջ հետ, նրանք պղծութիւն գործած կը լինեն: Երկուսն էլ մահուան թող դատապարտուեն, որովհետև մահապարտ են»: Մա մեծ տարբերություն է. երկրորդ դեպքում խոսքը կվերաբերվի երկսեռական և ամուսնացած տղամարդկանց, սակայն ոչ՝ նույնասեռական (ու հատկապես կնոջ հետ չամուսնացած):

²⁸ Մրանք էլ արվակնացնողներն են, որոնք ներքինի են դարձրել արվակնացողներին կամ ներքինիներին:

²⁹ Եվ իմպոտենտների նկատմամբ Բիբլիայում այլ բառեր են գործածվում. Ելք 23:26 «Քո երկրում անսեռունակ տղամարդ և ամուլ կին չեն լինելու»: Մեկ այլ Գրքում նույն տեղում ասվում է՝ վիժող ու ամուլ: Ուստի ասել, որ բնական ներքինիները դրանք ընդամենը սեռական տեսանկյունից անկարողունակ կամ իմպոտենտ (ու տարասեռական) տղամարդիկ են, ճիշտ չէ, զի այդ դեպքում Գիրքն ասում է՝ անսեռունակ տղամարդ կամ ամուլ:

դրա մեկնաբանը շատ մանրամասն ձևով է ներկայացնում այս մեկնաբանությունը. <http://www.homosexualeunuchsandthebible.com/>: Ուղղակի երկու խոսքով նշենք, որ եվրոպական մի շարք լեզուներում գործածվող eunuch բառը գալիս է հին հունարեն ευνούχος բառից, հետևյալ արմատներից. ευνέ (անկողին) և εχείν (ունենալ, պահպանել), այսինքն բառացի՝ անկողնապահ. երբ խոսքը գնում էր ազգի կանանց մաքրությունն ու կուսությունը պահպանելու մասին, տարասեռական ու երկսեռական տղամարդիկ անվստահելի էին, ինչպես Մուհամեդն է Ղուրանում դուրս անում մի ներքինիի, երբ վերջինս նկատում է, որ կանանցից մեկի մարմինը շատ գեղեցիկ է ու գրավիչ՝ խոսելով նրա մեջքի, իրանի մկանների մասին: Մուհամեդը կասկածում է, որ այս տղամարդը նույնասեռական չէ, և կարող է մարմնական ցանկություն կամ կիրք տածել կանանց նկատմամբ: Մակայն միայն մահմեդականության մեջ չէ, որ նման երևույթ կա. անտիկ աշխարհից էլ բացի, գիտենք, որ Իսրայելում նույնպես բազմակնությունն ընդունված է եղել, և դա գտել է իր ամրագրումը Հին Կտակարանում:

Մատթեոսից մեջբերած հատվածը խիստ կարևոր է. այնտեղ է խոսվում և՛ բնական, և՛ «մարդակերտ», և՛ սեփական կամքով ներքինիացված անհատների մասին: Այսինքն, հստակորեն բաժանված են երեք կատեգորիաները, որպեսզի հնարավոր չլինի աղավաղել խոսքը՝ ասելով դա վերաբերում է միայն ամորձատված տղամարդկանց, կամ անկարողունակ տղամարդկանց, կամ նման այլ բաներ: Բնական «անկողնապահներ» (ներքինիներ): Ո՞վ կարող է եղպիսին լինել, արդեն խոսվեց դրա մասին. ի դեպ, երբեմն ոչ նույնասեռական տղամարդիկ նույնասեռական էին ձևանում, որպեսզի ազատ մուտք ունենային կանանց հարեմներ:

Մատթեոսի խոսքում Քրիստոսը ոչ միայն խոսում է «ներքինի» ծնվածների մասին, այլև ասում՝ **ով որ կարող է տանել թող տանի**, որովհետև ոչ բոլորն են կարողանում դա տանել: Շատ նույնասեռականներ փորձում են «բուժվել» իրենց նույնասեռականությունից, հիմնականում՝ պահպանողական հասարակության ու հատկապես կրոնական աշխարհայացքի տեր մարդկանց ճնշումների, հոմոֆոբիայի ճնշման ներքո: Ցավոք, ոմանք, ի վիճակի չլինելով դիմանալ այդ ամենին, չեն կարողանում **տանել այդ ամենը**, ինքնասպան են լինում՝ մերժված լինելով վերոնշյալ հասարակության ու անհատների կողմից, մյուսները ձևանում են՝ իբր «բուժվել» են ու տարասեռական են դարձել:

Խիստ կարևոր է, որ Քրիստոսի ու իր աշակերտների միջև այս խոսակցությունը տեղի է ունենում փարիսեցիների և իր աշակերտների հետ: Ի պատասխան իր աշակերտների եզրակացության, որ Մատթ. 19:12 «...եթե այդպես է մարդի բանը կնկայ հետ, լաւ չէ ամուսնանալ»: Քրիստոսն էլ ասում է, որ 19:11 «Ամենքը չեն տանում այդ բանը, բայց որոնց որ տրուած է»³⁰: Մա խիստ կարևոր պատգամ է. պատմականորեն էլ, այսօր էլ, շատ

³⁰ Թերևս, այս հատվածը կարող է երկակիորեն մեկնաբանվել. ամուսնանո՞ւմ են նրանք, ով որ դա կարող է տանել, թե՞ չեն ամուսնանում նրանք, ով որ դա կարող է տանել: Երկրորդ վարկածն ավելի կենսունակ և

ծնողներ, երբ իմանում են, որ իրենց երեխան նույնասեռական է, նրան փորձում են «ուշքի բերել»՝ ամուսնացնելով (հաճախ իր կամքի դեմ) կնոջ հետ: Հենց այս խոսքն է, որ ուղղված է նման ծնողներին: Կան անհատներ, որ չեն կարող ամուսնանալ, և նրանց ամուսնացնելով փաստորեն դրդում են դեպի մեղքի (մեղք քրիստոնեության տեսանկյունից կհամարվի առանց պոռնկության պատճառի կնոջից բաժանվելը, ինչն էլ հաճախ տեղի է ունենում, երբ նույնասեռական անհատն արդեն ազատ է և կախում չունի ծնողներից ու այլ անհատներից և ստիպված չէ տարասեռական ձևանալ): Նման ընտանիքները հաճախ կայուն չեն լինում, և, ի վերջո, ապահարձան է տեղի ունենում, կամ էլ պաշտոնապես միասին են լինում, իսկ իրականում՝ ոչ. նույնասեռականը հետևում է իր բնությանը: Երբեմն էլ նույնասեռական տղամարդիկ ու նույնասեռական կանայք են համաձայնության գալիս՝ ձևականորեն հաստատել իրենց հարաբերությունները ոչ թե որպես նույնասեռական զույգեր, ինչպես իրականում են, այլ որպես տարասեռական զույգեր, նորից խուսափելու համար հոմոֆոբիայից՝ իր բոլոր դրսևորումներով:

Խիստ սիմվոլիկ է հետևյալ հատվածը, որ շարունակությունն է ներքինիներին վերաբերող պատմության. Մատթ. 19:13 «Այն ժամանակ նրա մօտ մանուկներ բերուեցին, որ նրանց վրայ ձեռք դնի ու աղօթք անի. իսկ նրա աշակերտները սաստում էին բերողներին: ¹⁴Յիսուս ասաց. «**Թո՛ղ յլ տուեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք ինձ մօտ գան,** որովհետև երկնքի արքայութիւնը այդպիսիներինն է»: ¹⁵Եւ նրանց վրայ ձեռք դրեց ու այդտեղից գնաց: ¹⁶Եւ ահա մէկը մօտենալով նրան՝ ասաց. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ յաւիտենական կեանքն ունենամ»: ¹⁷Եւ նա նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարու մասին հարցնում³¹. մէ՛կ է բարին. եթէ կամենում ես յաւիտենական կեանքը մտնել, **պահի՛ր պատուիրանները**»: ¹⁸Նա ասաց. «Որո՞նք»: Յիսուս նրան ասաց. «**Մի սպանիրը, մի շնանարը, մի գողանարը, սուտ մի վկայիրը...**»:

Խիստ կարևոր է. իր աշակերտներն իրեն լավ չէին հասկանում երբեմն, և անում էին հակառակ բաները: Քրիստոս դեմ չէ, որ երեխաներն իրեն մոտ գան, իսկ աշակերտները նրանց սաստում էին՝ առանց դա իմանալու: Սա հենց այն մասում է, ուր խոսվում է ներքինիների մասին, այդ թվում՝ բնական ներքինիների մասին: Արդյո՞ք Քրիստոս դեմ է, որ իր ԼԳԵՓ (Լեսբի, Գեյ, Երկսեռական, Փոխսեռական) երեխաներն էլ իրեն մոտենան: Պողոսը և շատ փարիսեցիներ ու եկեղեցականներ վանում են նման երեխաներին, իսկ Քրիստո՞սը: Ոչ: Այսօր կան նույնասեռականներ, որ խիստ մեծ ներքին կոնֆլիկտ ունեն իրենց սեռական կողմնորոշվածության և եկեղեցու հետ կապված: Նրանք վանված են, սաստված, ինչպես երեխաները, որ ցանկացան Քրիստոսին մոտենալ. եկեղեցականներից ոմանց բացասական վերաբերմունքի պատճառով նրանք չեն կարողանում եկեղեցի այցելել, որովհետև իրենց

ճշմարիտ է թվում, հատկապես որ նույն բառերը կրկնվում են, երբ Քրիստոս Յեշուա Իմանուէլը նկարագրում է ներքինիներին:

³¹Մեջբերումն արված է հետևյալ Աստվածաշնչից <http://kendimian.com/Bible/Matthew.html>, սակայն այլ բան է ասում մեկ այլ Աստվածաշունչ (Գիդեոն Միջազգային, 1998թ). Մատթ. 19:17 «...Ինչո՞ւ ես ինձ բարի ասում. **ոչ ոք է բարի, բայց միայն մեկն՝ Աստուած**»:

սաստել են, ասել՝ անմաքուր ես, չես կարող, իրենց մեջ մտցրել ու զամել են այն միտքը, որ իրենք անմաքուր են: Մատթեոսի պատմվածքի սիմվոլիկան ահռելի է. այսօր Աստծո շատ ԼԳԵՓ երեխաներ վանված են, սաստված, նրանց և եկեղեցու միջև պատնեշ է դրված: Մատթեոսի խոսքերի մեկնաբանության այս տարբերակը կարող է լինել մի էական հիմնապյուն, որ կարող է հարթեցնել նույնասեռականների և քրիստոնեական եկեղեցիներից շատերի միջև եղող հակասությունները: Մեծագույն ընդվզումներից մեկը Մատթեոսի խոսքերի այս մեկնաբանման դեմ կարող է լինել այն, որ, ինչպես որոշ եկեղեցիներ են ասում, Քրիստոսն ինքն էլ ներքինի էր ծնվել: Եթե բնական, ապա ինքն՞ էլ է նույնասեռական եղել... այս առումով էլ կան տարբեր մեկնաբանություններ... մի կողմ թողնենք դրանք դեռևս: Այնուամենայնիվ, նույնասեռականները կարող են ընդունվել հայ առաքելական եկեղեցու և այլ եկեղեցիների կողմից էլ, եթե ընդունեն տվյալ մեկնաբանությունը (որ բնական ներքինիները նույնասեռականներն են, և նրանք դատապարտված ու «մահապարտ» չեն, ինչպես արվամուլները, արվագետները, սողմականները, և նման այլ հանցագործներ):

Մի՛ սպանիր

Մի՛ սպանիր. Ղեստացուց 20:13 «Եւ եթե մարդ մը իր կնոջ հետ պառկելու պէս արուի հետ պառկի, երկուքն ալ պղծութիւն ըրին»: Այս հատվածն ուղիղ կերպով դեմ է ՄԻ ՄՊԱՆԻԸ պատվիրանին, և ցավոք նույնիսկ 20-րդ դարում (ո՞վ գիտե, գուցե 21-րդում էլ) հենց այս բառերն էին մեջբերում՝ արդարացնելու համար նույնասեռականների սպանությունները: Պետք է հաշվի առնել, որ Ղեստական գիրքը գրվել է Ղեստացոց համար՝ հոգևորականների, և ոչ՝ աշխարհիկ մարդկանց համար: Ուստի չարաշահել այդ մեջբերումը, առավել ևս արդարացնելու համար նույնասեռականների սպանությունները՝ հակաքրիստոնեություն է, որը հակասում է Տասը Պատվիրաններից մեկին՝ Մի՛ սպանիր: Քրիստոսն է ասում հետևիք այս պատվիրաններին, ընդ որում՝ մի՛ սպանիրը՝ առաջինը այդ դեպքում՝ հետևելով ներքինիների խոսակցությանը:³² Այս շարքում է և սուտ մի՛ վկայիրը:³³

Իսկ նույնիսկ եթե եկեղեցին հրաժարվի վերանայել իր մոտեցումը տվյալ խոսքերի նկատմամբ (ընդ որում՝ խոսքը տողերն ու խոսքերը վերափոխելու մասին էլ չէ (չնայած

³² Մի՛ սպանիրից հետո էլ գալիս է մի՛ շնանարը, որն էլ նորից կարող է վերաբերել և՛ ներքինիներին, որպեսզի նրանք սեռական թափափված ու քառտիկ կյանք չվարեն, և՛ մյուսներին, զի որոշ տարասեռականներ նույնասեռականներին ստորացնելու համար նրանց բռնաբարում են... մի՛ շնանար:

³³ Որոշ նույնասեռականներ, ենթարկվելով կրոնական ծայրահեղականների ճնշումներին, երբեմն հասարակայնորեն խոսելով իրենց սեռական կողմնորոշվածության մասին, վկայում են, իբր իրենք բուժվել են և կոչ անում մյուսներին էլ այդպես վարվել: Նման տեսակի օրինակներ կարելի է հանդիպել արդեն նշված այս կայքում. <http://www.badmouth.net/top-five-republican-gay-sex-scandals/>: Մակայն շատերը, որ անցնում են «բուժիչ թերապիաների» միջով, պատմում են՝ ինչքան ահավոր մեթոդներ են կիրառվում (ներառյալ՝ էլեկտրաշոկ, զգվանքի ներշնչում ու լոբոտոմիա, որ արգելվել է արևմուտքում, սակայն, օրինակ, Հայաստանում դրա կիրառման դեպքեր դեռևս գրանցվում են ցավոք, որոնք խիստ բացասական ազդեցություն են թողնում անհատի վրա՝ նրան ոչ թե «բուժելով» նույնասեռականությունից, այլ «նվիրելով» նոր ցավեր ու հիվանդություններ, և որ դրանք չեն գործում մեծամասամբ: Մյուսներն էլ «բռնվում են» գործի վրա:

իրենք դա անում են պարբերաբար), այլ՝ դրանց մեկնությունը վերանայելու), ապա կան մի շարք այլ հարցեր ու խնդիրներ. Աստվածաշնչում կան բազմաթիվ խոսքեր, որ այսօր կիրառական չեն, սակայն պարունակվում են Բիբլիայում, ու եթե դրանք չվերաիմաստավորվեն, ապա դրանք բառացի կոչ են անում քարկոծել այս կամ այն մարդկանց, սպանել ու վերացնել սրանց ու նրանց, ինչպես Ղևտացոց 20:13-ի դեպքում:

Այսպես. Ելք 35:2 «...Այն (շաբաթ) օրը գործ գործողը պիտի մեռցուի»: Արդյո՞ք պարկեշտ ու «ճշմարիտ» քրիստոնյաները քարկոծում են բոլոր նրանց, ով գործ է անում կամ աշխատում շաբաթ օրը:

Ելք 35:3 «Շաբաթ օրը ձեր բոլոր բնակարաններուն մեջ կրակ պիտի չվառեք»: Իսկ բոլոր պարկեշտ քրիստոնյաները հետևո՞ւմ են այս Օրենքին: Ձմռանը, երբ ցուրտ է ու օրը՝ շաբաթ, դուք ջերմություն չե՞ք ստանում այս կամ այն ձևով (փայտ, գազ, կն):

Ելք 11:7 «Եվ խոզը...անիկա ձեզի անմաքուր ըլլա: 8 Ասոնց միսէն մի՛ ուտեք...»: Բա հայկական խորովածը: Մենք ազգովի որպես պարկեշտ քրիստոնյաներ հրաժարվո՞ւմ ենք խոզի մսից:

Ընդհանրապես, Ղևտացոց 19:36 խոսքը հստակորեն նշում է, որ այս օրենքները հրեաների համար են գրված. «...Ձեզ Եզիպտոսէն հանող Տէրը՝ ձեր Աստուածը՝ էս եմ: 37 Ուստի իմ բոլոր կանոններս ու իմ բոլոր կարգադրություններս պահեցէ՛ք եւ կատարեցէ՛ք զանոնք: Ես եմ Տէրը»: Ընդհանրապես, պատմական փաստն այն է, որ Հին Կտակարանը դա հրեաների պատմական, մշակութային, քաղաքական ժառանգության մի կարևոր մասն է, և քրիստոնեաները դա ուղղակի վերցրել և գործածում են՝ համարելով նաև իրենցը: Եթե իմ այս տեքստը ինչ-որ մի հոմոֆոբ վերցնի և այն օգտագործի նույնասեռականներին քննադատելու համար, դա իմ համաձայնությամբ չէ, որ կլինի: Ցայսօր էլ հուդայականներից շատ ծայրահեղականներ չեն ընդունում քրիստոնեությունն ու քրիստոնյաներին, իսկ քրիստոնյա ծայրահեղականներն էլ փորձում են դատապարտել հուդայականներին ու հուդայականությունը³⁴, սակայն սա այլ խնդիր է, որ դուրս է քննարկման մեր թեմայից: Ուստի Հին Կտակարանից մեջբերում անելիս... պետք է զգուշանալ... որ հրեաներին ու Իսրայելի որդիներին ուղղված պատգամները (այն էլ՝ հազարամյակներ առաջ) մեր վզին չփաթաթվեն ստիպողաբար: Օրինակ, խիստ զարմանալի է հետևյալը. Ելից 22:9 «Արջառի ու էշի, ոչխարի ու հագուստի և ամեն տեսակ բաների կորուստներին վերաբերող և վեճ յարուցող խնդիրների իսկությունը պարզելու նպատակով երկու կողմերը թող կանգնեն Աստծու դատաստանի առաջ: Նրանցից ում որ Աստուած մեղաւոր ճանաչի, նա կրկնակին թող հատուցի միւսին»: Ի՞նչ է նշանակում սա: Աստված է դատավարությունը անում, այն էլ՝

³⁴ Իհարկե, երևույթը համատարած չէ, և չի վերաբերում բառացի բոլորին, այլ հիմնականում ծայրահեղականներին, երբ հուդայականը համոզված է՝ իր կրոնն է միակ ճշմարիտը, իսկ քրիստոնեան էլ՝ հակառակը:

նման «մանր» խնդիրների դեպքում, ո՞վ է, որ ներկայացնելու կամ բարձրաձայնելու է Աստծո որոշումը...

Այս դեպքում վիճող կողմերը կանգնում են Աստծո դատաստանի առջև, ընդ որում՝ Աստված ինքն է որոշում մեղավորին, իսկ նույնասեռականներին կարելի է առանց դատ ու դատաստան սպանե՞լ: Սա չափազանց մատերիալիստական ու հակաքրիստոնեական չէ՞, եթե տառացի մեկնաբանենք խոսքերը: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ Բիբլիայի մեկ այլ տարբերակում ասվում է՝ մեղավորները պիտի կանգնեն դատավորների առջև, իսկ այստեղ՝ Աստծո առջև. Ուստի՝ կամ մահվանից հետո է այս դատավարությունը լինելու, կամ էլ դատավորները նույնացվել են Աստծո Դատաստանը կատարողների հետ: Այս հակասության պարզ պատասխանը հետևյալն է. Ղևտացոց գիրքը (նույնիսկ կարելի է ասել՝ օրենսգիրքը կամ վարքագիրքը³⁵) գրվել է Ղևտացոց համար: Ղևտացոց, և ոչ՝ ողջ ժողովրդի, առավել ևս՝ քրիստոնյաների, որովհետև վերջիններս գոյություն չունեին, երբ գրվել էր Ղևտացոց օրենսգիրքը:

Կամ՝ Ելից 22:18 «Մի՛ թողեք, որ կախարդներն ապրեն: ¹⁹Ով որ կենակցի անասունի հետ, նրան մահապատժի ենթարկեցե՛ք: ²⁰Ով որ կուռքերին գոհ մատուցի, մահապատժի թող ենթարկուի: Զոհ մատուցեցե՛ք միայն Տիրոջը»: Հին Կտակարանում նշվում է նաև, որ մահապատժի պիտի արժանանան նաև այն զավակները, որոնք նգովում կամ անարգում են իրենց ծնողներին: Ընդհանրապես ծնող հասկացությունը վեհ է, և ծնողները հարգանքի առարկա են երեխաների համար, սովորաբար: Սակայն եթե ասենք ինչ-որ մեկը ի բերանն անիծել է իր հորը, արդյո՞ք դուք նրան մահապատժի կենթարկեք:

Ելք 22:21. «Պանդուխտին մի՛ չարչարեք, մի՛ նեղեք նրան, որովհետև դուք ևս պանդուխտ էիք Եգիպտացիների երկրում»: Այս խոսքից պարզ է դառնում, որ այս ամբողջը գրված է հրեաների համար... նորից:

Սակայն Նոր Կտակարանն էլ ունի նման օրենքներ, որոնց մենք չենք հետևում բառացի. Ա Թուղթ առ Տիմոթեոս, Գլուխ 2. այստեղ Պողոսը կնոջը կարգադրում է լուռ ու համեստ լինել՝ իրեն զարդարելով բարի գործերով, և ոչ՝ «հիւսուածներով, ոսկիով, մարգարիտներով կամ թանկագին հանդերձներով»: Եվ կնոջն արգելում է տղամարդուն սովորեցնել (2:12), ոչ էլ՝ իշխի տղամարդու վրա՝ նշելով, որ Եվան է օձին խաբվել ու մեղք գործել, և ոչ՝ Ադամը, իսկ 15րդ խոսքն ասում է. «Սակայն կ'ապրի որդեծնութեան համար³⁶...»: Այսպիսով, եթե բառացի ընկալենք ու մեկնաբանենք այս հատվածը՝ կինը չի կարող ինչ-որ հասարակական, մշակութային, առավել ևս քաղաքական պաշտոն զբաղեցնել և իշխել տղամարդու վրա. օրինակ կարող է ծառայել ցանկացած կին, ասենք՝ Մարգարեթ Թեթչերը. հաճախ նա վարում էր բիրտ քաղաքականություն, որին հակադրվում

³⁵ Գիրք, որը կարգավորում է մարդկային այս կամ այն խմբի վարքուբարքը, երբեմն միայն հասարակական, երբեմն՝ նաև անձնական:

³⁶ Մեկ այլ Գրքում ասվում է՝ «սակայն պիտի փրկուի անիկա որդեծնութեամբ»:

էին շատերը, այդ թվում՝ շատ տղամարդիք: Ուստի նա Օրենքի (ոչ կրոնական Օրենքի) ուժով հրամայում, սովորեցնում, իշխում էր շատ մարդկանց, այդ թվում՝ տղամարդկանց վրա: Եվ եթե ասենք, որ Պողոսն արգելում է կնոջը սովորեցնել, ապա ոչ մի կին չի կարող դասախոս լինել: Եվ Պողոսը եզրակացնում է. կինը ապրում է որդեճնության համար: Սա տղամարդու աչքով կնոջը նայող տղամարդ է. եթե հետևենք նրա խոսքերին, ապա կնոջը հիմնականում պիտի դիտարկենք մեղսագործ Եվայի սերունդ, որ ինքնել է մեղավոր, և ում մեղքը քավելու միակ ձևը որդեճությունն է: Արդյո՞ք այդպես է: Արդյո՞ք կինը պիտի ստիպված լինի միայն զավակներ ունենալ, և չի կարող լինել հասարակության լիարժեք անդամ: Իսկ եթե դա մեծ արվեստագետ կամ գիտնական է, մեծ ավանդ ունի, և չունի որդի՞: Նա նզովված է: Իհարկե, կլինեն ոմանք, որ կհամաձայնվեն, սակայն կլինեն շատերը, որ չեն համաձայնվի: Կախված է այս բառերի մեր մեկնաբանությունից: Նույնն է նույնասեռականների դեպքում. քննադատել ու զանակոծել, թե՞ հասկանալ ու բաց սրտով ընդունել:

Բ Օրինաց 22:5 «Կնոջ մը վրայ այր մարդու հագուստ թող չըլլայ ու այր մարդը կնոջ հագուստ պէտք չէ հագնի...»: Այսպիսով, քրիստոնյա կանանց արգելվում է հագնել տղամարդու հագուստ, և հակառակը: Արդյո՞ք մենք բոլորս հետևում ենք այս խոսքին: Արդյո՞ք շոտլանդացի տղամարդիկ իրենց ազգային կիլտերով ատելի են Աստծոն՝ իրենց ազգային հագուկապի պատճառով, ինչպես և ճապոնացիները՝ իրենց ավանդական հագուկապով: Արդյո՞ք հագուստով ու հագուկապով է, որ Աստված մեզ դատելու է: Իսկ եթե ընդունենք, որ տաբատն ի սկզբանե «արարվել է» տղամարդու համա՞ր: Կամ՝ ջինսերը: Չե՞ որ հասարակությունը ծայրահեղական չէ, չի պահանջում, որ միայն տղամարդիկ հագնեն ջինս և ընդհանրապես տաբատներ:

Բ Օրինաց 22:20 խոսքն ասում է, եթե աղջիկն ամուսնացել է ու կույս չէ եղել ամուսնանալիս, նրան պէտք է քարկոծել: Այդպե՞ս ենք վարվում: Ընդհանրապես, մահապատիժն ընդունելի է Հին Կտակարանում: Արդյո՞ք մենք այդպես պիտի վարվենք: Իսկ հենց այդտեղի «Մի՛ սպանիր»ը՞:

Արդյո՞ք պարկեշտ քրիստոնյաները քարկոծում են շաբաթ օրն աշխատող անհատներին, սպանում կախարդներին ու հեթանոսներին (որոնք այսօր էլ հավաքվում են Գառնիում և այլ վայրերում՝ գովերգելու և հիշելու Հայոց Հին Աստվածներին), խոզի միս չեն ուտում, ևն, ևն, ևն: Խելամիտ քրիստոնյաները բառացի և ուղղակի չէ, որ ընկալում ու գործադրում են այս հատվածները՝ ընդունելով, որ դրանք հնացած են, շատերն էլ չեն կարդացել այս հատվածները: Ուստի, կա՞ ինչ-որ հիմնավոր պատճառ նույն կերպ չվարվել և նույնասեռականների ու նույնասեռականության դեպքում (ընդ որում՝ խոսք չկա պեղոֆիլիայի մասին, հանցավոր արարքների մասին, այլ ընդամենը՝ նույնասեռական պատանիների, երիտասարդների, ընդհանրապես՝ անհատների մասին, որոնք սոդոմական չեն, ոչ էլ՝ արվամոլ):

Հին ուխտի շատ օրենքներ այսօր անկիրառելի են: Եվ հետևաբար գործածել Հին Կտակարանը՝ դատապարտելու համար նույնասեռականներին, նույնն է՝ այն օգտագործել արդարացնելու համար ստրկատիրությունը (ԵԼԻՑ կամ ԵԼՔ 21:7 «Եթե որևէ մեկն իր աղջկան որպես աղախին վաճառի, ապա այդ աղջիկը թող չազատագրուի, ինչպես ազատագրում են ստրկուհիները»), քարկոծումն ու մահապատիժները...

Բացի դրանից, Մատթեոսի 19-րդ խոսքի պատմությունը ցույց է տվել, որ նույնիսկ Քրիստոսի աշակերտները կարող էին վարվել իրենց ուսուցչի կամքին հակառակ (ինչպես և այլ հատվածներ, օրինակ՝ Մատթ 15:16, երբ աշակերտները չեն հասկանում Քրիստոսի առակը, նա էլ վրդովվում է՝ ասելով. «Դեռևս դո՞ւք էլ անհասկացող էք»): Ուստի երբ Պողոսը կամ ուրիշը քննադատում է նույնասեռականներին, պետք է հարց տալ՝ Քրիստոս համաձայն կլինե՞ր նման բանի: Նույնիսկ մարմնավաճառ Մագդաղենացու հետ Նա այդպես չվարվեց՝ դեմքին չչարտեց, որ Մագդաղենացին պոռնիկ է, անբարոյական, որ Աստծո արքայությունը չի ժառանգելու (ինչպես այսօր շատերն են անում, և ինչպես Պողոսն է արել): Իսկ այստեղ խոսքն անբարոյական անհատների մասին չէ, այլ՝ նույնասեռականների, որոնք վերջին հաշվով նույն մարդիկ են՝ տարբեր հիմնականում միայն իրենց սեռական կողմնորոշվածությամբ: Հարկ է հիշել. Մատթ. 7:1 «Մի՛ դատեք, որ չ՛դատուիք: ... 3 Եւ ի՞նչու քո եղբոր աչքի միջի շիւղը տեսնում ես, եւ քո աչքի միջի գերանը չես նշմարում»:

Պետրոսը համոզված էր, որ չի դավաճանի Քրիստոսին, սակայն. Մատթ. 31:34 «Յիսուսը նորան ասեց. Ճշմարիտ ասում եմ քեզ. Այս գիշեր դեռ հաւը չ'իօսած՝ երեք անգամ կ'ուրանաս ինձ»: Եվ բոլոր աշակերտներն էին ասում՝ հետո մեռնելու էլ լինեմ, չե՛մ ուրանա քեզ: Սակայն... հետաքրքիր փաստ է՝ Քրիստոսից հետո առաջինը այս աշխարհից հեռացավ Հուդան... բոլոր այս հատվածները ասում են, որ մարդիկ մարդ են՝ անկատար, սխալվող, սեփական աչքի գերանները չնշմարող, սակայն դիմացինի փշի վրա ծիծաղող... Եթե Պետրոսը սխալմամբ նույնասեռականությունը համարում է հակաբնական, դա չի նշանակում, որ մենք պետք է կուրորեն հետևենք նրա սխալին մի կողմից, մյուս կողմից էլ նրա սխալները հիմք չեն իրեն իսկ մերժելու համար, երբ նրա խորհուրդները հակասական չեն հատկապես գիտության և կրոնի ասպարեզում. Ա Թուղթ Առ Թեսաղոնիկեցիս, 5:21 «Ամեն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք»: Արդյո՞ք նույնասեռականներն ու նույնասեռականությունն ինքն իրենով, որպես բնության մի մասնիկ, չար են կամ ոչ բարի. արդյո՞ք Սոկրատեսը, Լեոնարդո Դա Վինչին, Միքելանջելոն, Պյոտր Չայկովսկին և շատ այլոք չար էին և համայն մարդկության առջև պիտի պատասխան տան որպես հանցագործներ ու մեղսագործներ: Իսկ ի՞նչ կլինե՞ր, եթե Դա Վինչին սպանեին Մէթյու Շեփրդի և շատ այլոց պես՝ մեջբերելով Ղևտացոց 20-րդ գլխի 13-րդ խոսքը: Ի դեպ, երբ Դա Վինչին երիտասարդ էր, նրա դեմ դատական գործ էր հարուցված. նա և իր մի քանի ընկերները մեղադրվում էին... «սոդոմականության» մեջ (մի տղամարդ մարմնավաճառի հետ «կապի» համար)... եթե նրանց մեղքն ապացուցվեր, նրանց

սպասում էր... և չէր լինի Մոնա Լիզա, և ինչէ՛ր կկորսվեին... ո՞վ գիտե՛ ինչէ՛ր են կորսվում, երբ այսօրվա Դա Վինչիներն են ինքնասպան լինում կամ սպանվում այլոց կողմից՝ կրոնական անհանդուրժողականության պատճառով:

Հաջորդ անգամ նույնասեռականներին դատապարտելիս՝ մեջբերելով խոսքեր Հին ու Նոր Կտակարանից, հիշե՛ք ու հաշվի առեք այն, ինչ կարդացիք այստեղ: Նույնասեռականներն էլ կենդանի մարդիկ են, որ ցանկանում են այն, ինչ և տարասեռականները. հաջողություն, առողջություն, սեր, հարգանք, առաջադիմություն, բարեկեցություն... և հիշեք՝ կյանքը փոփոխություն ու շարժում է. առաջնորդվել կանգուն տաբուներով ու փակ լինել նորին նշանակում է լինել հակաքրիստոնեա. Քրիստոսն ասում է սկզբում. Մատթ. 15:24 «...Ես չեմ ուղարկուել՝ եթե ոչ Իսրայելի տան կորած ոչխարների մօտ»՝ մերժելով քանանացի մի կնոջ, սակայն հետո նա մտափոխվում է՝ ազդվելով կնոջ հավատի մեծությունից: Եթե նա շարժվեր գրավոր օրենքով ու տաբուներով, նա նորից կմնար իր հին մտքին, ու չէր օգնի այդ կնոջը: Այսպիսով, ի սկզբանե նա Իսրայելի մոտ էր ուղարկվել, սակայն հետո նա ասում է. Մատթ. 28:19 «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Հօր ու Որդու եւ Սուրբ Հոգու անունովը»... անփոփոխ է, ասում են, միայն Մեկը... իսկ մենք՝ փոփոխական ենք: Նույնիսկ Քրիստոսն է փոխել իր միտքը...

Ի՞նչ է նշանակում Ծննդոց 3:22 խոսքը. «Տեր Աստուած ասաց. «Ահա Ադամը դարձաւ մեզ նման մէկը, նա գիտի բարին և չարը...»: Մենք ի սկզբանե Աստծո Կերպարով էինք արարվել, ըստ հուդայական աշխարհընկալման (որն էլ իրեն վերցրեց քրիստոնեությունը), իսկ հետո էլ՝ մի քայլով էլ մոտեցանք Նրան՝ ուտելով Գիտելիքի պտուղը: Մի բան էր Ադամին պակաս՝ Անմահություն... մենք անմահ չենք, հետևաբար Աստված չենք, ոչ էլ՝ Աստծոն հավասար: Սակայն մենք Աստծո Կերպարներն ենք, նաև ունենք Գիտելիք, ինչը նշանակում է՝ մենքել ենք արարիչներ, փոքրիկ արարիչներ՝ մեր Ազատ Կամքով և Ընտրության Իրավունքով: Սրանից բխում է, որ մենք Արարման ոչ միայն պասկներն ենք, այլև՝ դրա կենտրոնն ու անքակտելի տարրերը, առանց որի աշխարհն այլ կլիներ: Մենք միայն + չենք, այլև՝ ակտիվ մասնակիցներ, որոնք ընտրում են, ստեղծում, կերտում: Գրերը մեզ օգնելու համար են, ոչ թե՝ մեզ ստրկացնելու ու ծառայեցնելու: Դրանք ուղենիշներ էին, այսօր էլ դրանք ուղենիշներ են, սակայն դրանք օգնում են, ոչ թե՝ պարտադրում: Դրանք նույնիսկ փոփոխական են... հատկապես երբ թարգմանվում են:³⁷

³⁷ Օրինակ բնագրով՝ եբրայերենով, առաջին գիրքը կոչվում է *וְיִשְׂרָאֵל*՝ Բերեյշիթ: Եվ հենց այս բառով է սկսվում Տոռան, նրա առաջին գիրքը՝ Բ'րեյշիթը (կամ Բերեյշիթը), որ հայերենում կոչվում է Ծննդոց (որը ներառված է քրիստոնեական Հին Կտակարանի մեջ): Հայերենում գիրքը կոչվում է Ծննդոց, սակայն նախադասությունը սկսվում է մեկ այլ բառով՝ «ի սկզբանե» կամ այլ տարբերակներ: Ավելին. *א* (ալեֆ) տառը հանդիպում է առաջին նախադասության մեջ (բնագրով) վեց անգամ, ինչի մասին էլ խոսում է Կաբբալան որպես կարևոր մի երևույթի, եբրայական կոսմոլոգիայի մի հատվածի: Իսկ երբ թարգմանում ես, բոլոր այս մանրամասները կորչում են... Մեկ այլ օրինակ է, երբ հայերենում մի խոսքը գտնվում է մի գրքի 26-րդ հատվածում, օրինակ, իսկ այլ դեպքերում՝ 25րդ կամ այլ: Եվ որոշ դեպքերում Մի գիրք կարող է ունենալ 12 խոսք կամ գլուխ, իսկ

Երբ մեզնից ոմանք ասում են «Ես չեմ ընդունում նույնասեռականներին ու նույնասեռականությունը, դա մեղք է, Աստված դեմ է դրան» ու նման բառեր, մենք ցավ ենք պատճառում կենդանի մարդկանց: Ժամանակին Բիբլիայից էր, որ պահպանողական հարավային ամերիկացիները, փորձելով արդարացնել ստրկատիրությունը և սևամորթների ստորադաս լինելն ԱՄՆ-ում, մեջբերում էին խոսքեր ու նախադասություններ: Այսօր կան քրիստոնեական եկեղեցիներ, որ ընդունում են նույնասեռականներին, ընդ որում (ոմանք)՝ ոչ միայն որպես «գառնուկներ», այլև՝ որպես «հովիվներ» եկեղեցում: Ահա օրինակներ.

- *Կանադայի Միացյալ Եկեղեցի,*
- *Քրիստոսի Միացյալ Եկեղեցի,*
- *Մետրոպոլիտեն Համայնք Եկեղեցի (Metropolitan Community Church),*
- *բոլոր գերմանական լյութերականները,*
- *Գերմանիայի բարեփոխված և միացյալ Ավետարանչական Եկեղեցիները (reformed and united churches in EKD),*
- *Շվեյցարական Բարեփոխված Եկեղեցու բոլոր շվեյցարական բարեփոխված եկեղեցիները (all Swiss reformed churches in Swiss Reformed Church),*
- *Նիդերլանդների Բողոքական Եկեղեցին,*
- *Դանիական Ազգային Եկեղեցին,*
- *Շվեդիայի Եկեղեցին,*
- *Իսլանդիայի Եկեղեցին,*
- *Նորվեգիայի Եկեղեցին,*
- *Ավետարանչական Լյութերական Եկեղեցին ԱՄՆ-ում,*
- *Ընկերներ Գերադաս Համաժողովրդ և Ընկերները Մեծ Բրիտանիայում (Friends General Conference and the Friends in Great Britain),*
- *Եպիսկոպոսական Եկեղեցին (Episcopal Church),*
- *Առաքելական Հաստատող Հիսունականների Ընդհանուր Դաշինքը (Global Alliance of Affirming Apostolic Pentecostals)...*

Օրինակները հիմնականում բերված են Եվրոպայից և ԱՄՆ-ից, սակայն հանդուրժողական եկեղեցիների օրինակներ կարելի է գտնել նաև այլուր:

Ցայսօր էլ ստրկությունն արգելված չէ Բիբլիայով, ո՛չ Հին, ո՛չ էլ Նոր Կտակարանով: Ցայսօր էլ շատերն օգտագործում են Բիբլիան՝ դատապարտելու համար նույնասեռականությունը: Ինչպե՞ս վարվել՝ մեր ընտրությունն է, մեր ազատ կամքի ընտրությունը: Սակայն երբ հոգևորականն է խոսում նույնասեռականությունից կամ, ընդհանրապես, մի մարդ, որ նույնասեռական չէ ու չի առնչվել նույնասեռականների հետ ընդհանրապես, այլ առանց քննելու հիմք է ընդունել մի քանի խոսք՝ կտրված իրենց կոնտեքստից... հիշե՛ք Մատթ 15:14 խոսքը. «...երբ կոյրն է առաջնորդում կոյրին, սխալում է, և երկուսն էլ փոսն են ընկնում»: Պատկերացրեք՝ ի՞նչ անբարոյական և անընդունելի կլինի, եթե մենք կոնտեքստից դուրս հանենք ու մեջբերենք, ասենք, Ելք 21:7րդ խոսքը, որը թույլ է տալիս սեփական աղջկանդ ստրկության մատնես:³⁸ Մի ժամանակ դա ընդունելի էր, այսօր էլ շատ պահպանողականներ հետևում են Պողոսի խոսքերին՝ կնոջը ստորադասելով տղամարդուն: Սակայն շատերն էլ դա չեն ընդունում՝ հրաժարվելով կնոջը դիտարկել «մեղսագործ» Եվայի շուքի տակ, առավել գրավիչ և առաջնային դարձնելով Մարիամի կերպարը:

Ընտրությունը մերն է. «ընդդեմ» թե՛ «հանուն», «դեմ» թե՛ «կողմ», «ի ոչնչացում» թե՛ «ի արարում», «պահպանողական ու անքննող» թե՛ «բաց ճշմարտությանն ու փոփոխությունների առջև»: Ճշմարտությունն անփոփոխ է, սակայն մեր միտքն է փոփոխական, մեր ընկալումն է փոփոխական, հասարակությունն է փոփոխական, մեզ շրջապատող աշխարհն է փոփոխական:

Երբ ռադիոյի գյուտը նոր էր, պահպանողական քրիստոնյաներն այն անվանեցին «պոչավոր սատանա», հետո եկավ «պոզավոր սատանան»՝ հեռուստացույցը, իսկ ընդամենը երկու-երեք դար առաջ՝ ի՞նչ ինքնաթիռ, ի՞նչ հեռախոս (միհատ էլ՝ բջջային), մարդկանց խարույկի էին հանձնում ընդամենը ասելու համար՝ Երկիրը կլոր է: Իսկ դրանից էլ մի քիչ առաջ՝ ոչ քրիստոնյային սպանելը պատիվ էր և «տոմս» դեպի դրախտ, ինկվիզիցիան «սուրբ էր», ինդուլգենցիաները՝ Աստծոն հաճո և իրական, խաչակրաց արշավանքները՝ Աստծո կողմից հովանավորվող և «յանուն Քրիստոսի»: Իսկ այսօ՞ր: Նույնիսկ պահպանողական քրիստոնյաներից միայն ամենաձայրահեղականներն են (խիստ փոքրամասնություն), որ չեն օգտագործում ռադիոն, հեռուստատեսությունը, ինտերնետը՝ և՛ անձնական, և՛

³⁸ Այսօր որոշ բիբլիաներ փոփոխում են այս հատվածները, օրինակ գործածելով աղախին բառը: Նույնը՝ այլ լեզուներում. որոշ թարգմանություններ գործածում են, օրինակ, servant (ծառայող կամ աղախին) բառը, մյուսները՝ slave (ստրուկ): Սա փորձ է մեղմել հակամարտությունը, Գրերը հարմարեցնել ժամանակակից հասարակության պահանջներին: Սա ընդունելի է, եթե միայն արվում է անաչառ կերպով, բոլորի նկատմամբ, ով անարդարաբար հավածվել կամ հալածվում է: Իսկ եթե արվում է միայն մեկ կամ մի քանի հասարակական խմբի համար, դա արդեն անաչառություն չէ, դա արդեն քրիստոնեահողայական Աստծո խոսքը չէ, ով նույն է բոլորի նկատմամբ և Ով հավասարապես սիրում է իր բոլոր երեխաներին:

գործական բնագավառներում: Ինչպիսի՞ դիրքորոշում բռնել, ո՞ր կողմին հարել՝ փակ ու տաբույացված, թե՞ բաց ու քննող... մեր ընտրությունն է, մեր Ազատ Կամքի Ընտրությունը:

Քրիստոսը, ասում են, սեր է: Քրիստոնեություն ենք ասում իր անունով, հետևաբար՝
Քրիստոնեություն նշանակում է սեր: Իսկ ինչպիսի՞ն է սերը... Մեծ, անսահման,
Համբերատար, ջիանդող, չար ու վատ չդավող... Հույս, Հավատ, Մեր, որոնցից Մեծագույնը
Մերն է...

...

Դատարկությունը ոչնչություն չէ: Լռությունը ոչնչություն չէ: Ծրջանը զրո չէ, նրա ներառած
դատարկությունը ոչնչություն չէ, որ պիտի պարտադիր նշանակի: Եթե լռում ես,
պարտադիր չէ՝ ասելիք չունենալու պատճառով է, որ լռում ես:

Դատարկությունը թող լինի չասածներս, լռությունը թող լինի հարգանքի տուրքը և
հիշողությունը՝ լռողների ու լռածների հիշողությունը:

Լույս, Խաղաղություն, Մեր բոլորիս

Օգտագործված Գրականություն և Աղբյուրներ

1. <http://penthesilee.wordpress.com/2010/07/13/ma-petite-visite-de-la-blogosphere-catholique-traditionaliste/>
2. <http://www.youtube.com/watch?v=R3pvAk7Zz5U>
3. <http://blansh.wordpress.com/2008/07/21/gays/>
4. http://en.wikipedia.org/wiki/Homosexuality_in_animals
5. http://news.nationalgeographic.com/news/2004/07/0722_040722_gayanimal.html
6. Mel White, “What the Bible says -- and doesn’t say -- about homosexuality”
7. Վանեսա Բեյրդ. «Մեռական բազմազանության արժանահավատ ուղեկից»
8. <http://ourmine.wordpress.com/2010/03/19/gaymoral/>
9. Markku Heikkinen, “All Boys”
10. <http://www.oliari.com/storia/michelangelo.html>
11. . <http://www.homosexualeunuchsandthebible.com/>
12. <http://www.badmouth.net/top-five-republican-gay-sex-scandals/>

Օգտագործված Բիբլիաներ և այլ Սրբագրված Տեքստեր.

13. "ספר חמשה עשר תורה עם הפירוטות"
14. «ԱՐԵԻԵԼԱՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻԻՆ» (<http://kendimian.com/Bible/>)
15. Bible (New International Version)
16. Bible (New American Standard Bible)
17. Bible (King James Version)
18. Աստուածաշունչ (Եբրայական եւ Յունական Բնագիրներէն Թարգմանուած)
19. Библия
20. Նոր Կտակարան (Գեղեոն Միջազգային)